



**ԻՐԱՐԱՆՅՈՒՄ  
ԻՐԱՆԱՀԱՅ  
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ**

# ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- 2 **Համայնք**
- 4 **Ֆորբս` Հայաստանը աշխարհի երկրորդ վատագույն տնտեսությունը**  
Գայիանե Աբրահամեան
- 4 **Նռանեան. ավերորդ Ադմուկ «Ֆորբս»-ի աղիւսակի շուրջ**  
Արման Գալոյեան
- 7 **Գովք Մատուրոյու**  
Աշուղ Դիլբար
- 14 **«Հայելի» կայքի հարցազրոյցը «Յոյս»-ի խմբագրի հետ**  
Սեդրակ Գոջամանեան
- 15 **«Հայելի»-ի այցելուների քամենթները**
- 16 **Յոյսի խմբագրի պատասխանը քամենթներին**
- 18 **Կենսաթանուղ փոխարինում է ֆոսիլային վառելիքներին**
- 20 **Հետաքրքիր վաւերագրական ֆիլմ` «Տուև»**
- 22 **Խոհանոց` սալաղ հաւով եւ նուդելով**
- 24 **Մարզանք**  
Արման Տ. Ստեփանեան
- 26 **Ժամանց**

# Յոյս

Մշակութային եւ Հասարակական  
Երկշաբաթաթերթ

Ե արի, քի103, Յուլիս 27, 2011,  
1200 րուման  
Հայաստանում 320 դրամ

**Իրարանցում  
իրանահայ համայնքում  
Ս. Ամենափրկիչ վանքի  
մանրանկարների  
անհետացման  
արձագանքը**



- 8 **Ազգային իշխանութեան 7 սրբազան սկզբունքները**  
Ազատ Մտաւոր Ական
- 12 **Իրանահայ մամուլի բողոքի միասնական յայտարարությունը**
- 13 **Սպահանի հայոց թեմի առաջնորդարանի երկրորդ հաղորդագրություն**

## Պ ա ր ս կ ե ր է ն ք ա ժ ի ն

- |   |   |   |   |    |                                   |
|---|---|---|---|----|-----------------------------------|
| 2 | <b>Այս համարի հայերէն էջերում</b>   | 6 | <b>Իրանահայ դեմքեր` Յովսէփ Միրզայեանս</b> | 11 | <b>Նկարիչներ` Գարիկ Մանուկեան</b> |
| 4 | <b>Ֆորբս` Հայաստանը աշխարհի երկրորդ վատագույն տնտեսությունը</b><br>Գայիանե Աբրահամեան | 7 | <b>Քաջիկ հայ արդիւնաբերողները</b>         |    | <b>Պարոյր Սեւակը` պարսկերէն</b>   |
|   |   | 8 | <b>Հայ ժամանակակից</b>                    |    |                                   |

### Յոյս

Հասարակական-մշակութային երկշաբաթաթերթ

Արտոնատեր`  
Լեւոն Ահարոնեան

Խմբագիր`  
Ռոբերթ Սաֆարեան

### Խմբագրական կազմ`

Քարմեն Ազարեան,  
Լիա Խաչիկեան,  
Գարուն Սարգսեան,  
Արմինե Մելիք-Իսրայելեան

Գեղարւեստական ձեւաւորում`  
Լիա Խաչիկեան

Հայերէն բաժնի սրբագրիչ`  
Քարմեն Ազարեան

Կայք  
Քաջիկ Սաֆարեան

Մարզական  
Արման Ստեփանեան

Բաժանորդագրութիւն  
Քարինե Եաղուբի

### Հասցե`

Թեհրան, Էնդելաբ պողոտայ,  
Վալի Ասր քառուղի  
համար 1048  
66495180 66492693

Հեռախօս-հեռապատճեն`  
66495208

hooyoys@inbox.com

www.hooyoys.com

# ԻՆԱՅԱՅ ՀԱՄԱՅՔԸ ԻՐԱՆԱՀԱՅ ԼՐԱՏԻԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՂՈՐԴՄԱՄԲ

## ԱԼԻՔ ՕՐԱԹԵՐՐ



### ՀԱՐՅԱԶՐՈՅՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՏԵՆԱՊԵՏ ԷԴԻԱՐԴ ԲԱԲԱՆԱՆԵՆՆԻ ՇԵՏ

«Ինչ աշխատանք, որ տարւում է, որեւէ մի բան չկայ, որ ժողովուրդը, հասարակութիւնը չպէտք է իմանայ եւ նրանց համար չպէտք է լուսաբանւի. կան դատական խնդիրներ, որոնք մնում են երեւի միայն Դատական խորհրդի կազմի մէջ` իրենց կապը եւ Սրբազան Զայրը: Այնպիսի խնդիրներ կան, որոնք երեւի չպէտք է դրսեւորւեն, խիստ անձնական են, բայց այն, ինչ որ համայնքային խնդիրներ են, սրանց բոլորի մասին ժողովրդի իրաւունքն է իրազեկելու: Կարող է իրենց մօտ հարցեր առաջանալու դէպքում` դիմեն, պատասխանենք եւ դրանով աւելի շատ շփման մէջ կը լինենք, հանդիպումներ կը լինեն մօտկից կամ ողջ Թեմական խորհրդի կազմի, կամ մի քանի անդամների հետ, եւ կամ չենք սպասի հրաւեր լինի` զնանք, կամ Պատգամաւորական ժողովի անհատների հետ միատեղ նոյնիսկ շրջաններում մենք պատրաստական ենք ամէն ինչ մանրամասնելու եւ լուսաբանե-

լու: Ժողովրդի իրաւունքն է, որ իմանայ, օրինակ` Զամահայկական խաղերի ձեւը ինչ փուլեր է թեւակոխում, այս խաղերի միթականը որտեղից է հայթայթւում, ով է տալիս, միութիւնները դերակատար ր են թէ` ոչ, մարզիկը որքանո՞վ է այդ գործառնություն դերակատար, գումարը ինչպէ՞ս է ծախսւում, այստեղ ոչինչ չկայ, որ ժողովրդից գաղտնի պահւի. ժողովուրդը եթէ իրազեկ լինի, հանգիստ էլ անհրաժեշտ տեղերում իր ներդրումը կը բերի, բայց ոչ թէ թիրիմացութիւնների մատնի, օրինակ` գիտէք, Թեմական խորհուրդը գումարը մարզական խաղերի յատկացնում է, բայց կրթական ոլորտին` ոչ. սրանք բոլորը այնպիսի հարցեր են, որոնք պէտք է յստակ եւ պարզ լուսաբանւեն եւ հաշւեցոյցն էլ տրւի, թէ որքանն է Թեմական խորհուրդը տւել, որքանը, ասենք, անհատը կամ միութիւնը: Իսկապէս, հասարակութեան նկատմամբ յարգանքը աւելի շատ մեր կողմից պէտք է լինի, որ մեր փոխանցմամբ իրենք զգան, որ իրենց յարգում ենք, բայց այդ աշխատանքը տանելու մէջ որոշ խոչընդոտներ կան, որոնք մարմին կապ չունեն. սրանք փոփոխման այն թռիչքային փուլի խնդիրներն են, որոնք, դժբախտաբար, մեր մէջ ընդհանրացածը, եթէ ցանկանում ենք փոփոխման ենթարկել, շատ դժարութիւնների առջեւ ենք կանգնում, տարիներ ինչպէս ընթացել է` հենց այդպէս պէտք է լինի, նոր ձեւեր չպէտք է լինեն: Օրինակ` մենք կրթական ոլորտում ամէն աշակերտի համար 500.000 թուման սուբսիդ ենք տալիս. հիմա սա ժողովուրդը

պէտք է իմանայ, եւ իր իրաւունքն է սա: Եթէ փոփոխութիւնների է ենթարկւում, դա նոյնպէս պէտք է իրազեկել կամ իր իրաւունքն է իմանայ` դպրոցների բացը ինչպէս է լինում, որքան է ամէն աշակերտի համար վերջանում մեր բոլորիս համար եւ դրա դիմաց որքան ենք ստանում:

Օրինակ` հիմա գերազանցիկ աշակերտների Զայաստան մեկնելու որոշման մէջ մենք դերակատար եղել ենք, ժամանակի բերումով` Թեմական խորհրդի միթական վիճակը լաւ է եղել եւ վճարել է: Զիմա ճիշտ մի ընտանիքի նման որոշ ծախսերը պէտք է իջեցնենք, որ մի առ ժամանակից յետոյ, երբ այդ շէնքերը եկամուտ տան, յետոյ կրկին կարողանանք այդ աշխատանքը տանել: Այնպէս որ` ամէն մանրուք պէտք է իրազեկել եւ մենք կաշխատենք այդպէս առաջընորդել:»

## ՀԱՅԵԼԻ ԿԱՅՔ



### ՄԱՌԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԳՂՐՈՅԻ ԴԺԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«*Չայելի*» կայքը վերջերս ընդարձակ զեկոյց է տեղադրել Մառի Մանուկեան դպրոցի աշակերտութեան եւ նրանց ծնողների խնդիրների մասին: Իրազեկ ստորագրած թղթակիցը խօսել է ներկաներից մի քանիսի հետ, իսկ յետոյ զեկուցել է ժողովի անց ու դարձը:

*Ահա երկու հատուած այդ հաղորդագրութիւնը.*

Այդ ընթացքում խօսում են նաեւ դպրոցի ծնողական խորհրդի նախագահ եւ Դ.Բ.Ը. Միութեան 2-րդ աստեճապետ պրն. Էդարդ Բաբեանի հետ, որը նոյնքան դժգոհ է դպրոցի կացութիւնից եւ անելացնում է՝ «Մարի Մանուկեան» դպրոցում վերջին վեց տարիների ընթացքում հինգ տեսչուհի է փոխւել...եւ դա այն պատճառով է, որ Թեհրանի ուսումնադաստիարակչութեան 6-րդ շրջանի վերատեսչութիւնը սպառնած եւ հանգստի կոչման սեմին գտնուող տեսչուհիներ է առաքում այս դպրոցը: Նա էլ հաստատում է, որ դժարութիւններ գոյութիւն ունեն դպրոցում եւ ծնողները տատանման մէջ են, որ իրենց աշակերտուհիներին նորից այս դպրոցում արձանագրեն, թէ փոխադրեն ուրիշ դպրոց:

Իսկ իսկական հարցին ու ցաւալի երեւոյթին ակնարկեց տկն. Աստղիկ Բաբայեանը, ասելով. – «Խնդիրը, որ միայն այս դպրոցին էլ չի կապում, այնքան վերքոտ ու թարախոտ է, որ չգիտեմ ինչպէս ակնարկել: Ձանց առնելով բացառու-

թիւններին, պիտի ցաւով խոստովանենք, որ մեռաւ զոհաբերող ուսուցիչ-ուսուցչուհիների ժամանակաշրջանը, եւ այն շրջանը, երբ աշակերտը առանց մասնաւոր ուսուցչի ու միայն ուսուցչի կարողութեամբ էր գերազանց աշակերտ դառնում: Դժբախտաբար պիտի մոռանանք դրանք: Իսկ եթէ շատ քրքրենք հարցը, հասնում ենք այն եզրայանգումի, որ Զայոց դպրոցը պիտի ունենայ հայ տեսուչ»:

**ԱՐԱՔՍ ԸՆԲԱԹԱԹԵՐ**



**ՆՈՐ ԹԵՄԱԿԱՆ  
ԽՈՐՀՈՒՐԴԸ ԱՐԱՔՍԻ  
ԳՆԱՀԱՏՄԱՍԲ**

Յամար 205 (Մարտ-Մայիս 2011)  
Նոր թեմական խորհրդի կազմում, ինչպէս նախորդը, բացակայում են այլախոհները, ինչը նորակազմ Թեմական խորհրդից ի ծնէ խլելու է թափանցիկութիւնն ու աշխու-

ժութիւնը, նրան մատնելով օրօրօցային գործունեութեան:

Միւս կողմից ԶՅԴ պաշտօնաթերթի, երկար տարիների, ներքին տնօրէնին այստեղ տեղաւորելը անլի կուսակցականացրեց թեմի բարձրագոյն գործադիր մարմնին, որն ինքնաբերաբար եւ ակամայից հարց է առաջացնելու՝ թէ նոր Թեմական խորհուրդը ո՞ւն դիմաց է պատասխանատու համարելու իրեն՝ ժողովրդի թէ՛ կուսակցութեան:

Յատկանշելի է, որ Թեհրանի հայկական ամենամեծ «Սասուն» թաղամասից, որտեղ աշխատում է մէկ եկեղեցի, 6 դպրոց, մէկ մանկապարտէզ եւ վեց միութիւն ոչ ոք ներկայ չէ նոր թեմականում: Սա այն դէպքում, երբ ԹՅԹ Կանոնադրութեան 5-րդ՝ Թեմական խորհուրդ, գլխի տակ, յօդւած 38-ում, շեշտւած է՝ «Թեմական խորհրդի անդամների և անձնափոխանորդների ընտրութեան ժամանակ, Պատգամաւորական ժողովը առաջնորդում է այն սկզբունքով, որ ըստ հնարաւորի իւրաքանչիւր թաղ ներկայացուցիչներ ունենայ կազմի մէջ»:

**Յոյս** -ի մէկամեայ բաժանորդագրութիւնը, լաւագոյն նւերը՝ ձեր հարազատներին եւ արտասահմանում ապրող բարեկամներին:

Մէկամեայ բաժանորդագրութեան գինը  
 Իրանում՝ 30,000 թուման  
 Արտասահմանում՝ 200 դոլլար

Ոչ մի բանկային վճարում:  
 Միայն զանգահարէք մեզ, եւ մեր սուրհանդակը կայցելի ձեզ՝ ձեր տանը:

**6 6 4 9 5 1 8 0**  
**6 6 4 9 5 2 0 8**  
**6 6 4 9 2 6 9 3**

## «ՖՈՐԲՍ». ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՐԿՐՐՐԴ ՎԱՏԱԳՈՅՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂՆ Է ԱՇԽԱՐՀՈՒՄ

Գայիանե Արթահանյան



«Ֆորբս» հեղինակաւոր ամսագիրը հրապարակել է աշխարհի տա-

ւր վատագոյն տնտեսութիւն ունեցող երկրների ցուցակը, որում

Հայաստանը զբաղեցրել է երկրորդ վատագոյն հորիզոնականը Մադագասկարից յետոյ:

117 երկրներից ընտրուել է վատագոյն տասնեակը՝ հաշի առնելով երեք տարւայ ընթացքում երկրի համախառն ներքին արդիւնքի աճը եւ գնաճը (այդ թւում՝ Արժոյթի միջազգային հիմնադրամի 2012 թ. կանխատեսումները), մէկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ինդեքսը, արտաքին պարտքը եւ ներմուծման արտահանման յարաբերակցութիւնը: 2010-ի համեմատութեամբ այս ցուցակում զգալի փոփոխութիւններ են տեղի ունեցել: Եթէ նախկինում ընդգրկուած էին հիմնականում աֆրիկեան պետութիւններ, ապա այս տարւայ ցու-

### ԱԻԵԼՈՐԴ ԱՂՄՈՒԿ «ՖՈՐԲՍ» ԱՄՍԱԳՐԻ ԱՂԻԻՍԱԿԻ ՇՈՒՐԶ

**Հարցազրոյց ԱԺ ՀՅԴ խմբակցութեան պատգամաւոր, տնտեսագիտութեան թեկնածու Արա Նռանեանի հետ**

Արման Գալոյեան

Նախ կը խնդրէի մեկնաբանել միջազգային հեղինակաւոր «Ֆորբս» ամսագրի հրապարակած տւեալները, թէ Հայաստանն իր վատագոյն տնտեսութեամբ երկրորդն է աշխարհում: Որքանով էր այդ գնահատականն իրատեսական:

Որքան էլ քննադատենք մեր տնտեսական վիճակը եւ մեր երկրի կառավարութեան տնտեսական քաղաքականութիւնը, պէտք է հաստատել, որ Հայաստանը ոչ երկրորդ, ոչ էլ տասներորդ վատագոյն տնտեսութիւնը ունեցող երկիրն է: Աշխարհում կան տասնեակ երկրներ, որոնք ոչ միայն ունեն վատ տնտեսութիւն, այլ նոյնիսկ կարելի է ասել՝ ընդհանրապէս տնտեսութիւն չունեն: Դետեւաբար, բոլոր նրանք, ովքեր համաձայնուում են «Ֆորբս»-ի հետ, կան լաւատեղեակ չեն, կան

ցակում տեղ են գտել նաև Ուկրաինան (4-րդ տեղ), Ղրղզստանը (7), Իրանը (10): Տնտեսութիւնների անկման հիմնական պատճառները հետազոտութեան հեղինակները համարում են ոչ միայն տնտեսական ճգնաժամը, այլ նաև սխալ կառավարումն ու կոռուպցիան: «Գանան եւ Զիմբաբուեի բարելաւել են իրենց տնտեսութիւնը եւ դուրս եկել ցուցակից, մինչդեռ մի շարք երկրներ, այդ թուում՝ Հայաստանն ու ճամայկան, հիմնականում համաշխարհային ճգնաժամի պատճառով աւելի ցածր հորիզոնականներ են իջել: Միւսները, ինչպէս, օրինակ՝ Մադագասկարն ու Նիկարագուան, ցածր հորիզոնականներ են զբաղեցրել հիմնականում իրենց ղեկավարների անկարողութեան պատճառով: Ջարմանալի չէ, որ 10 վատագոյն տնտեսութիւն ունեցող երկրներից ութը «Թրանսփարենսի ինթերնէյշնլ»-ի («ԹԻ») ներկայացրած ցուցակում («Կոռուպ-

ցիայի համաշխարհային համաթիւ») նոյնպէս ստորին հորիզոնականներ են զբաղեցրել, որոնցից Գլինեան, Ղրղզստանը եւ Վենեսուէլան ամենացածր հորիզոնականներում էին: «ԹԻ»-ի հետազոտական խմբի ղեկավար Ռոբին Յոդէսի խօսքով՝ կոռուպցիան խոչընդոտում է տնտեսութեան զարգացումը, մարդկային զարգացումն արտացոլող բոլոր ցուցիչները դրանից տուժում են: «Որտեղ կառավարութիւնը չի աշխատում, տնտեսութիւնը չի զարգանում», - ասել է Յոդէսը: Ըստ «Ֆորբս»-ի՝ Հայաստանը հիմնականում տուժել է ֆինանսական ճգնաժամից. «2009-ին Հայաստանի տնտեսութիւնը 15%-ով անկում ապրեց, երբ արտասահմանեան ներդրումներով ընթացող շինարարական բումը ծախողէց համաշխարհային տնտեսական ճգնաժամի պատճառով: Գալիք մի քանի տարիների միջին աճի կանխատեսումներով՝ այս յետ-

խորհրդային երկիրը, որը կախած է Ռուսաստանի եւ Իրանի էներգակիրներից, ջանքեր է գործադրում աշխարհի միւս երկրներից յետ չմնալու համար: Հայաստանի մէկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 3000 դոլար է, որը 3 անգամ պակաս է հարեւան Թուրքիայի ՀՆԱ-ից, իսկ գնաճը 7% է»: Յայտնի տնտեսագէտ, «Ալլընտրանք» հետազոտական կենտրոնի ղեկավար Թաթուլ Մանասերեանը վստահում է «Ֆորբս»-ի այս գնահատականին. «Սովորաբար «Ֆորբս»-ի հետազոտութիւնները փաստարկւած են: Մեր հետազոտութիւնները եւս ցոյց են տալիս, որ Հայաստանի տնտեսութիւնը, մեղմ ասած, լաւ վիճակում չէ, այս առումով համակարծիք են, սակայն վստահ են, որ իրավիճակը շտկելու հնարաւորութիւնները սպառւած չեն», - «Արմենիա-Նաու»-ին» ասում է Մանասերեանը: Աղբիւր՝ [www.armenianow.com](http://www.armenianow.com)

փորձում են շահարկել այս իրավիճակը: Սխալ է նաև միւս ծայրայեղութիւնը: Ընդունելի չեն այն պնդումները, որ երկրում ամէն ինչ լաւ է եւ այս յօդւածով մեզ պարզապէս փորձում են վարկաբեկել: Հայաստանի տնտեսութիւնը ունի լուրջ խնդիրներ եւ ճգնաժամի տարիներին արձանագրեց խորը անկում: Նոյնիսկ այսօր մենք դուրս չենք եկել ճգնաժամից եւ դեռեւս չենք ձեւաւորել տնտեսական աճի նոր աղբիւրներ: Եւ եթէ «Ֆորբս»-ի աղիւսակը կոչւէր «Ճգնաժամի արդիւնքում խորը անկում ապրած տնտեսութիւններ», գուցէ կարելի էր համաձայնել: Ի դէպ, «Ֆորբս»-ի մասին: Այն սիրում է կազմել տարբեր վարկանիշային աղիւսակներ՝ լուրջ եւ անլուրջ, մարդկանց եւ երկրների, ապրանքանիշների եւ նախասիրութիւնների: Եւ «Ֆորբս»-ի յօ-

ւածի շուրջ այսքան աղմուկ չէր լինի, եթէ ժամանակին կառավարութիւնը ոգեւորութեամբ չփորձէր ժողովրդին նմանատիպ աղիւսակներով համոզել, որ Հայաստանը ունի հզօր տնտեսութիւն: Այս տարիներին իրական տնտեսական քաղաքականութիւնը փոխարինւեց իմիտացիոն գործընթացներով: Թէեւ քաղաքացիները տեսնում են երկրում բազմաթիւ խնդիրներ, թէեւ հազարաւոր մարդիկ կեանքի ծանր պայմաններից ելնելով բռնում են արտագաղթի ճանապարհը, մեզ համոզում են, որ Հայաստանի տնտեսութիւնը եւ կառավարութեան տնտեսական քաղաքականութիւնը արժանանում է ամենաբարձր գնահատականների: Եւ ահա մի օտարալեզու հանդէս ասաց հակառակը: Ինչ վերաբերում է մեր իրական տեղին աշխարհում: Ես չեմ ու-



զում, որ Հայաստանը համեմատեն յետամնաց երկրների հետ: Այսօր Հայաստանը յետամնաց երկրի տնտեսութեան մոդելով է առաջնորդւում՝ արտահանում ենք հումք, աշխատուժ, շուտով նաև դրամ (կենսաթոշակային բարեփոխումների արդիւնքում), իսկ ներմուծում ենք պատրաստի արտադրանք: Եւ այս յօդւածի մեզ համար ամենավատ հետեւանքն այն է, որ արդէն նաև դրսում մեզ դիտարկում են յետամնաց եւ չկա-

յացած պետութիւնների շարքում: Իսկ այստեղ իսկապէս Չայաստանը իր մեղքն ունի: Այո, եթէ համեմատենք Չայաստանը աշխարհի բոլոր երկրների հետ, ապա մենք կը զբաղեցնենք զարգացածութեան աստիճանով միջին տեղեր, սակայն բաւական է ցանկից հանել այն երկրներին, որոնց հետ համեմատելը անհեռանկարային է եւ փակուղային՝ պետականութեան կայացման ու հզօրացման տեսանկիւնից, իսկ ցանկում թողնենք կայացած պետութիւններին, ապա կը տեսնենք, որ կայացած պետութիւնների շարքում մենք կը զբաղեցնենք վերջին տեղերը:

Նոյնը վերաբերում է Չարաւային Կովկասի երկրներին իրար հետ համեմատելուն, ինչը խրախուսում է, օրինակ, Եւրոմիութեան կողմից: Եթէ Չայաստանը համեմատես Վրաստանի եւ Ադրբեջանի հետ, ապա միշտ կը մնաս այս երեք երկրների միջինացած մակարդակին: Այսպիսի մօտեցումը չի կարող թռչեքային զարգացում ապահովել մեր երկրի համար, չի կարող Չայաստանը դարձնել մեր ազգի պատկերացրած պետութիւնը: Չարկաւոր է ունենալ բարձր նշածող եւ դրան հասնելու յամառութիւն ու վճռականութիւն: Եթէ համեմատես յետամնացների հետ, միշտ կը մնաս յետամնաց պետութիւն:

Իսկ եթէ մենք ուզում ենք, որ մեզ չհամարեն յետամնաց պետութիւն, ապա պէտք է վարենք բոլորովին այլ տնտեսական քաղաքականութիւն, այլ արտաքին քաղաքականութիւն, եւ պատրաստ լինենք կատարել իրական ժողովրդավարական բարեփոխումներ:

Իմիտացիոն գործընթացներով երկար չես խաբի ոչ սեփական ժողովրդին, ոչ էլ ամբողջ աշխարհին:

**Ինչպէ՞ս կը մեկնաբանէք իշխանութիւնների արձագանքները. Չամարժէ՞ք էին ստեղծած իրա-**

**վիճակին, թե՞ ոչ:**

Սա անակնկալ էր իշխանութիւնների համար: Նրանք չէին սպասում մնան գնահատականի: Եւ թէ եւ տնտեսագիտական հիմնաւորումների մակարդակով կարծես թէ պարզաբանումներ եղան (խօսքը ֆինանսների նախարարութեան պարզաբանման մասին է), հասարակական ընկալման մասով կարծես թէ հարցեր մնացին: Չայաստանի քաղաքացիները բոլորովին էլ չեն ցանկանում ունենալ աշխարհի վատագոյն տնտեսութիւնը ունեցող երկիրը, սակայն դժգոհ լինելով իրենց կեանքից եւ սոցիալական վիճակից, պատրաստ են ընդունել նաեւ այդպիսի ծայրայեղ գնահատական: Եթէ կառավարութիւնը ցանկանայ պարզապէս համոզել հասարակութեանը, որ այդպիսի գնահատականները տեղին չեն, ապա պարզապէս զբաղւելու է հերթական ձեւական քայլերով: Լաւագոյն լուծումը կը լինի իրական քայլերի իրականացումը, որոնք վստահութիւն կը ներշնչեն մեր քաղաքացիներին՝ հաւատ ու վստահութիւն նախ եւ առաջ սեփական պետութեան նկատմամբ: Այդ դէպքում մեր երկրի հեղինակութեան վարկանիշին հասցւած հարւածը շատ աւելի հեշտ եւ յստակ պատասխան կը ստանայ: **Վարչապետ Տիգրան Սարգսեանը, սակայն, չի կարելորում այդ հրապարակումները, ԵՊՂ-ում նա նոյնիսկ յայտարարեց. «Ծիշտ կը լինի, որ այսպէս բուռն քննարկենք պրոֆեսիոնալ կազմակերպութիւնների պրոֆեսիոնալ վարկանիշները»:**

Պէտք չէ մի ծուղակից դուրս գալ նոր ծուղակի մէջ ընկնելու համար: Ես առաջարկում եմ ոչ թէ քննարկենք այլ պրոֆեսիոնալ կառոյցների գնահատականները, այլ քննարկենք մեր կառավարութեան տնտեսական քաղաքականութիւնը եւ դրա արդիւնքները: Մենք ունենք իրական կեանք,

իրական հոգսեր եւ իրական խնդիրներ: Եթէ դրանք լուծւեն եւ արտագաղթի փոխարէն լինի ներգաղթ, ստեղծւեն աշխատատեղեր եւ բարձրանայ կենսամակարդակը, ապա ոչ ոք չի քննարկի այդ կազմակերպութիւնների գնահատականը: Իսկ եթէ քաղաքացիների կեանքը վատանայ, նրանց դժուար կը լինի խաբել պրոֆեսիոնալ կազմակերպութիւնների կողմից տրւած բարձր վարկանիշերով:

**Ի վերջոյ, կարո՞ղ է սա լրացուցիչ հիմք հանդիսանալ, որ ՉՅԳ-ն ուժեղացնի իր ճնշումները կառավարութեան վրայ ու Սեպտեմբերին կրկին հանդէս գայ կառավարութեան անվստահութիւն յայտնելու պահանջով:**

Այն, որ այս յօդածով հարւած հասցւեց մեր երկրի հեղինակութեանը, որեւէ կասկած չկայ: Նմանատիպ ցանկում յայտնւած պետութիւնը չի կարող գրաւիչ լինել ներդրումների եւ գործարարութեամբ զբաղւելու համար: Նմանատիպ երկրի տնտեսվարողները չեն կարող դիտարկել վստահելի գործընկեր, իսկ այդպիսի գնահատական ունեցող երկրի արտաքին քաղաքականութիւնը խնդիրներ կունենայ արժանապատւօրէն ներկայանալու համար:

Մեր հաստատումները մնում են նոյնը՝ Չայաստանին պէտք է զարգացման նոր ռազմավարութիւն՝ բոլորովին այլ աշխարհայեացքով ու մտածելակերպով, այլ քաղաքական համակարգով եւ տնտեսական քաղաքականութեամբ: Չարկաւոր է նոր գաղափարախօսութեամբ նոր վերնախաւ եւ նոր իշխանութիւն: Մեր այս մօտեցումը ոչ միայն չի փոխւել, այլ նաեւ ստացել է բազմաթիւ հիմնաւորումներ: Չայաստանի հզօրացման ուղին այլ այլընտրանք չունի:

Աղբիւր՝ [www.lragir.am](http://www.lragir.am)



Աշուղ Ճատուրօղլու երգերը, յատկապես նրա նամակագրութիւնը Ամերիկայի Նախագահ Օբամայի հետ, մեծ աշուղական աշխուժութիւն են ստեղծել համայնքում: Երկրի չորս պոչից ստանում ենք երգեր՝ բոլորն էլ Ճատուրի գովքը: Դրանցից ստորեւ կը տպագրենք միայն մէկը, Աշուղ Դիլբարի գործը, որն համարեա իր մէջ է պարունակում ողջ աշուղական համակարգի խանդավառութիւնը: Ստացած տաղերի ոճի ու բովանդակութեան մէջ կան նշաններ, որոնք վկայում են, որ արդէն ակտիւացել են նաեւ իզական սեռին պատկանող աշուղները, որը շատ ուրախալի երեւոյթ է: Ահա Աշուղ Դիլբարի երգը:

## ԳՈՎՔ՝ ԾԱՏՈՒՐՈՂՆԻ

Աշուղների մէջէն էլած, դու ուրիշ մարդ իս գովելի,  
Բարաքին իս նամակ գրում, ստորագրում՝ Ճատուրօղլի,  
Ո՞վ քիզի պիս դէյրաթ ունի, յիս չը գիդիմ, Աստուած վկայ,  
Փառք մեր ազգին, որ ծնիլ ի, քիզ պիս մէ աշուղ գովելի:

Գրիչդ արծաթէն պիտի, թարի ունենայ հազար ռանգով,  
Որ «Յոյս»-ին մէջ միշտ գրիս, հազար ու մի քաղցր հանգով,  
Մինք էլ կարդանք, ու հազ անինք, քո շիտակով, քո հանաքով,  
Չունքի ուրիշ մէկը չկայ, քիզնից աւելի գովելի:

Դարդ մի անի թէ չի լսում, քո խնդրանքը էն Բարաքը,  
Տես մէկ օրում վունց գլորուաւ, իր սիրելի Մուբարաքը,  
Պըտտում է մարդու բախտը, վունց որ ըլլի, չարիս-Ֆալաքը,  
Վաղը գուցէ մեզ էլ բացի, մի յոյսի դուռ գովելի:

Դու վունց ըլնիս մէ բացած գիրք, ամինքին իս խըղմաթ անում,  
Վունց վոր մատեան, ազատ գրած, թէ մեր օրում, թէ անցեալում,  
Էդ մատեանում մինք կարդում ինք գրածներդ, հալ ինք անում,  
Օղորմի քու ծնողացն, վուր բերել են զաւակ գովելի:

Յիս էն մարդկանցից չիմ, վուր իզուր գովել իմանան,  
Դիլբարն իմ յիս, քիզ պէս աշուղ, ու մի քիչ գրել կիմանամ,  
Ամա քիզ պիս չիմ կարայ, թարգմանիլ Նարեկ ու Խայամ,  
Էնդու համար քիզ ասում իմ, Ճատուրօղլի գովելի:



# ԻՐԱՐԱՆՑՈՒՄ

7 Յուլիս. «Ազգ» օրաթերթում տպագրում է լուր Նոր Ջուղայի Ս.Ամենափրկիչ վանքի որոշ մանրանկարների եւ իտլաներկ նկարչութիւնների Լոնդանում յայտնելու մասին: 9 Յուլիս. հրատարակում է Սպահանի Հայոց թեմի առաջին բացատրական հաղորդագրութիւնը «Ալիք»-ում, որն աւելի է հարցեր առաջացնում: Յամենայն դէպս այս հաղորդագրութեամբ հաստատում է, որ Ն.Ջուղայի վանքի որոշ մանրանկարներ անհետացել են: Յուլիսի 14-ին հրատարակում է Սպահանի առաջնորդարանի երկրորդ հաղորդագրութիւնը (տես էջ 13): Իրանահայ լրատամիջոցներից մի քանիսը համատեղ յայտարարութեամբ բողոքում են Սպահանի Հայոց թեմին, այն բանի համար, որ հաղորդագրութիւնը յանձնել են միայն «Ալիք»-ին (տես էջ 12): Դժգոհում է նաեւ «Հայելի» կայքը, գրելով. «Պիտի հասկանանք, որ այսօր ինչ որ բան քաքցնելը շատ դժուար է ու դրան ուղղաժ անարդիւնաւէտ ջանքերն արժէ ուղղել բուն հարցերը լուծելուն»: «Հայելի»-ն սակայն քննադատում է նաեւ անպատասխանատու ինտերնետային «մեկնաբանութիւնները». «Ամենաանմալարդակ, էժան, անգրագէտ ձեւերով մարդկանց գող են անւանում»: Այսպիսով մանրանկարների անհետացման դէպքը, իրարանցում է ստեղծում ողջ իրանահայ համայնքում. այժմ հարցը ոչ միայն մի քանի նկարների գողացման մասին չէ, այլ մեր ողջ համայնքային գործելաճի եւ կառոյցի, ինչպէս բացատրել է հետեւեալ յօդւածում:

## ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՆՇԵՏԱՅԱԾ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ 7 ՍՐԲԱԶԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

*Ազատ Մտաւոր Ական*

Նոր Ջուղայի Սբ.Ամենափրկիչ վանքից գողացւած նկարների խնդիրը դեռեւս մնում է մութի մէջ, իսկ նոյն առիթով Սպահանի Հայոց Թեմի Առաջնորդարանի Դիւանի (ՍՀ-ԹԱԴ) հրապարակած լուսաբանական գոյգ հաղորդագրութիւնները աւելի խտացրեցին այդ մութը, իհարկէ, զուտ խորհրդապահական նպատակներով: Փոխարէնը դրանք առատ լոյս սփռեցին մեր Ազգային Իշխանութիւնների ազգաշէն աշխատաճի եւ նրանց ղեկավարող 7 սրբազան սկզբունքների վրայ: Բայց ինչքան ուզում ես լոյս սփռիր, երբ մի խումբ կամաւոր կոյրերն ու խաւարամիտները չեն կարողանում եւ աւելի շուտ չեն ուզում աչքերը բաց անել ու տեսնել, աւա՛ղ, ի՞նչ կարող ես անել:

Այդ բոլորով հանդերձ մենք, որպէս մի ազատ մտաւորական, մեր պարտքն ենք համարում լուսաւո-

րել խաւար ամբոխի միտքը եւ բացել նրա աչքերը, որպէսզի նա, այդ կոյր ու խաւարամիտ մարդկանց զոհը չդառնայ ամբոխը հասկանայ, թէ ի՞նչ է վերջապէս իշխանութիւնը, եւ ինչ սրբազան սկզբունքներով է նա ծառայում ի՛ր, շէտուում ենք, ի՛ր սեփական ժողովրդին: Եւ ահաւասիկ, այդ սկզբունքները, առանց հերթականութեան, որովհետեւ դրանք բոլորն էլ հաւասարապէս սուրբ են ու սրբազան:

Ա.- Խորհրդապահութիւն: Ձեռագրերից պոկւած նկարները գողացել են (իհարկէ Յարգելի Դիւանը պահպանելով իր դիրքին ու դրածքին վայել պատշաճութիւն, հաղորդագրութեան մէջ գողութիւն բայր չի գործածել, այլ միայն ասւած է «յանցագործ», որովհետեւ յայտնի չէ, որ տւեալ պարագային «յանցագործը» մասնագիտութեամբ հենց գող եղած լինի): Իսկ




մեր նշած կամաւոր կոյրերը բողոքում են, թէ ինչո՞ւ մեր ազգային իշխանութիւնները ձենը չեն հանել: Մէկը լինի, դրանց ասի, ախր ձեզ ինչ, յետոյ էլ նախ մի տեսէք, իմացե՞լ են ու ձենը չեն հանել, թէ՛ չեն իմացել ու ձենը չեն հանել: Մինչեւ որ գողերը («յանցագործները») իրենց չար բախտից ռաստ են եկել մի հալալ կաթ կերածի եւ նոր սրանից էլ եկտրոնային պոստով են իմացել, թէ ինչ հող է եկել իրենց ու իրենց ժողովրդի, այսինքն մեր բոլորիս գլխին: Ձեր այս հարցին երկրորդ հաղորդագրութեան մէջ ամենայն պատասխանատուութեամբ պատասխանել են որ, չէ՛, չեն իմացել, մինչեւ որ մէկ թէ երկու հալալ կաթ կերած Անգլիայից ու Ֆրանսիայից էլ եկտրոնային մասնակներով իրենց յայտնել են, թէ բա չասէք, էսպէս ու էսպէս: Բայց դա ի՞նչ կարելու է, վերջապէս, միթէ՞ Իշխանու-

# ԻՐԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

թիւնը նրա համար է, որ նստի, տեսնի, ո՞վ որտեղի՞ց ե՞րբ ի՞նչ է գողանում, բա ազգային գործերին ե՞րբ հասնի: Տւեալ պարագային կարելորն այն է, որ երբ էլ իմացել են էլի ձէնը չեն հանել, ինչո՞ւ, հարցնում են կամաւոր կոյրերը, պարզ չի՞, որ գողը չփախչի, մէկ. մէկ էլ, որ ամէն մարդ չիմանայ, որ վանքի թանգարանում թանկարժէք մասունքներ են պահուում: Հիմա էլ երեւի կը հարցնէք.- բայց գողը որտեղի՞ց չփախչի, Ջուղայի՞ց, թե՞ Անգլիայից: Այ՛ անմակարդակներ, ասել հայաստանցին, էտ ի՞նչ ցանցախ-ցանցախ հարցեր էք տալիս: Մարդիկ վեց տողի մէջ վեց անգամ ասել են ստուգում ենք, հետապնդում ենք, հետախուզում ենք, որ պարզենք, հիմա դուք ուզում էք գան ու միանգամից գողի, ներեղութիւն, «յանցագործի» անունն ու տեղն էլ ձեզ ասե՞ն: Միս կողմից, ենթադրենք, որ իմանում են, պիտի դնեն զուռնեն ու փչեն: Բա դուք ե՞րբ էք ուզում պետական մտածողութիւն սովորէք, ու զոնէ մի քիչ, մի քիչ հասկանաք, թէ ինչ է նշանակում պետական գաղտնիք: Հէնց էսքանն էլ, որ իմացել էք աւելորդ է եւ մեծ վնաս է տւել գործին: Ամենամեծ վնասը հէնց էն է, որ մարդիկ, միտքս՝ մեր իշխանները, ազգի թամամ գործերը թողած պիտի ընկնեն գողի յետեւից ման գան, ժողով դնեն, հաղորդագրութիւն շարադրեն, հասարակական հանդիպում հրաւիրեն, թյասեղան տան ու ձեր ցանցախ հարցերին պատասխանեն:

Աւելացնենք, սիրելի ժողովուրդ, որ խորհրդապահութիւնը մեզ համար, ոչ միայն սկզբունք է, այլ ազգային սրբութիւն, նոյնիսկ աւելի քան խնդրոյ





առարկայ կողոպտած, անետարանները: Խորհրդապահութիւնը մեր ազգային կեանքում նոյնպէս վաղեմութիւն ունի, այնքան, որ մեր ազգային նկարագրի անբաժան մասն է կազմում եւ մեզ թելադրում է, որ «մեր ձեռք մեր տնով անենք» մասնաւանդ եթէ, Աստուած մի արասցէ, գողն էլ տնից լինի:

Ուրեմն, մեր սիրելի ժողովրդին ասեմ, սիրելի ժողովուրդ հայոց, ի Յայաստան եւ ի սփիւռս աշխարհի, իմացած կաց, որ խորհրդապահութիւնը կոծկելու հետ երկնքից գետին տարբերութիւն ունի: Ու մէկ էլ էս աշխարհում բաներ կան, որ ինչքան չիմանաս համ դու ես հանգիստ, համ իշխանութիւնները, օրինակ Ջոն Էֆ Քենեդու կամ Բենազիր Բութոյի սպանութիւնը, Յոկտեմբերի 7-ը, Մարտի 1-ը, Նոր Ջուղայի ակումբի մեծածախս վերանորոգման ու հանդիսաւոր վերափակման խորհուրդը, Թոհիդ պողոտայի ութ յարկանի շէնքի շահն ու վնասը, հայ ժողովրդի յաւերժութեան, ոմանց կարծիքով յաւերժ դժբախտութեան առեղծածը...գողացւած ապրանքի աճուրդի տեղը, թւականը, աճուրդի ընկերութեան անունը եւ այլն, եւ այլն: Ախր, ժողովուրդ ջան, էս ամէնը քո ինչի՞ն են պէտք: Չէ՛, դու եղ կամաւոր կոյրերի «ամհիմն մեկնաբանութիւններին» մի լսի, ու հանգիստ քեզ համար ապրի, թող իշխանութիւն-

ներն էլ հանգիստ մտքով ու մասնաւանդ խղճով իրենց գործը անեն: Լա՛ւ, անցնենք յաջորդ սկզբունքին:

Բ.- Պրոֆեսիոնալիզմ (արհեստավարժութիւն): Առաջին Յաղորդագրութիւնը պարզ ու որոշ հաղորդում է.«Անմիջապէս կապել ենք մեզ վստահած մասնագէտի հետ, անելի մօտիկից ստուգելու հարցը եւ մեզ տեղեակ պահելու, ...» Թէ անմիջապէս ինչի՞ց յետոյ, պարզում է երկրորդ հաղորդագրութիւնը, (Անգլիայից եւ Ֆրանսիայի իրենց բարեկամների էլեկտրոնային նամակներից յետոյ), բայց թէ ովքե՞ր են իրենց բարեկամներն ու մասնագէտները, ըստ նախորդ սկզբունքի, կարելոր չէ, (բայց ախր դու կարելորն ու անկարելորն էլ իրարից չես ջոկում), կարելորն այն է, որ դիմել են իրենց վստահած մասնագէտներին, ինչո՞ւ, շատ պարզ է, որովհետեւ մենակ վստահելի մարդիկ կարող են մօտեմալ դարերից ժառանգած մեր ազգային հարստութեանը, տւեալ դէպքում ձեռագրերին, եւ մօտիկից «ստուգել» դրանք: Ահա քեզ գիմաստութիւն եւ զխրատ:

Երկրորդ կարելոր խնդիրն այն է, որ մեր Ազգ. Իշխու.-ում ամէն ինչ ստուգում է մօտիկից, ոչ թէ որոշ պարաս մարդկանց նման, որ հեռուն նստում են ու իրենց «ամհիմն մեկնաբանութիւններով», միտք են պղ-

տորում: Իրականութեան մէջ մեր իշխանութիւնները արհեստավարժ կերպով այդ միտք պղտորող մարդկանց հեռու են պահում ազգային դուռներից, թէ չէ, ով է իմանում ինչեր չէին պատահի վանքում:

Երրորդ ոչ պակաս կարելոր խնդիրն այն է, որ նոյնիսկ չեն մոռացել մասնագէտներին յանձնարարել, որ մօտիկից ստուգելուց յետոյ իրենց էլ տեղեակ պահեն, այդպէս էլ ասւած է առաջին հաղորդագրութեան մէջ:

Արհեստավարժութեան ցայտուն օրինակներից մէկն էլ այն է, որ մեր Ազգ. Իշխ.-ը նոյն երկու գործը կատարում է երկու տարբեր ռազմավարութեամբ՝ թէ «առաջնահերթաբար», թէ «զուգահեռաբար»: Հասկացա՞ք: Ո՞չ: Դէ, բարի եղէք ձեզ մի քիչ նեղութիւն տալ եւ մեզ նման մի քանի անգամ կարդալ բ. հաղորդագրութեան նախավերջին պարբերութիւնը, որը, որքան մենք հասկացանք ուզում է ասել, որ իրենք աշխատում են առաջ ապրանքը ետ բերել, նոր յետոյ սկսել «յանցագործութեան բացայայտման գործընթացը», այսինքն՝ գողերին բռնելու գործը, որը «զուգահեռաբար եւ օրինական միջոցներով հետապնդել եւ հետապնդուում է մեր կողմից»:

Ուրեմն, ինչպէս տեսնում էք, սիրելի ժողովուրդ, մեր ազգային հարստութիւնը գտնուում է վստա-

հելի ձեռքերում եւ մեր Ազգ. Իշխ.-ը ամէն ինչ արւում է բարձր մասնագիտական մակարդակով: Մնաց մի քանի աւելի աննշան նրբութիւններ, որ մենք էլ, սիրելի ընթերցող, չկարողացանք հասկանալ:

1-Մօտիկից ասելով մարդ են գտել, որ մօտիկից ստուգի, արդեօք վանքում ընդհանրապէս ձեռագրեր կ'ան կամ մնացե՞լ են, թէ՞ մարդ են ուղարկել Լոնդոն, ներեղութիւն Անգլիա, հէնց «աճուրդի» վայրում գողերին բռնի:

2- Ձեռագրերը, որից հանած են սոյն նկարները, հիմա իրենց տեղում են, թէ՞, Աստուած մի արասցէ...:

3- Ի՞նչ հաստատութիւն եւ ե՞րբ է աճուրդի դրել ապրանքը:

4- Եթէ ապրանքը օրը ցերեկով աճուրդի են հանել, էլ ինչի՞ համար է խորհրդապահութիւնը:

5- Դրանք վաճառե՞լ են, թէ՞ ինչ:

6- Ինչո՞ւ է նկարների տակը պարսկերէնով բացատրութիւններ տրւած, արդեօք դրանք որեւէ տեղ ցուցադրւած են եղել, եթէ այո, ապա որտե՞ղ եւ ե՞րբ:

7- Ինչո՞ւ են երկրորդ հաղորդագրութեան մէջ դրանք կոչել «ցուցանմուշ»:

Համբերութիւն ունեցիր, ժողովուրդ: Անհրաժեշտ կամ յարմար պարագային քո բոլոր հարցերի պատասխանը դու հաստատ կը ստանաս երրորդ հաղորդագրութեան մէջ, որովհետեւ Ազգ. Մարմինները, թէւ գողութիւնը, ներեղութիւն «անհետացումը» (այդպէս է ասւած հաղորդագրութեան մէջ, որովհետեւ, յայտնի չէ, կարող է պատահել, որ պատահիկները հէնց իրենք են անհետացել, ինչքան էլ ներկայ դրութեամբ դրանց հետքերը տանում են «Անգլիա»): Ինչ եւ իցէ, անհետացումը «վաղեմութիւն ունի», բայց վաղեմութեան օրէնքը դրա վրայ չի տարածւում եւ թեմիս ներկայի ազգային մարմինները չեն խուսափում պատասխանատուութիւնից: Նրանք, հաստա-

տական են վերադարձնել որեւէ կողպուտ, երբ եւ ում ձեռքով էլ դա պատահած լինի, պայմանով, որ, եթէ բանի տեղ գիտէք, ձեր անհերքելի փաստերը էլեկտրոնային մամակներով եւ բարեկամաբար յայտնէք իրենց՝ որեւէ արտասահմանեան երկրից: Վստահ եղէք, որ ձեր անուները կը մնան գաղտնի:

Գ.-Օրինապահութիւն: «... որպէսզի օրինական միջոցներով խնդիրը պարզենք:» շարունակում է ա. Հաղորդագրութիւնը, բ.-ում այս բառը կրկնել է երկու անգամ: Ուրեմն, ինչպէս պարզ տեսնում էք, Ազգ. Իշխ.-ում ամէն ինչ արւում է «օրինական միջոցներով», թէւ այքան էլ պարզ չէ, խօսքը ներքին օրէնքների մասին է, թէ՞ պետական ու միջազգային օրէնքի: Այստեղ, մեր խոնարհ կարծիքով, եւ թող ներողամիտ գտնւեն մեր յարգարժան իշխանութիւնները համարձակութեանս համար, գերադասելի են ներքին օրէնքները, այլապէս Ազգ. Իշխ.-ը ստիպւած կը լինի դաւաճանել իր ամենամիտակական սկզբունքին, որն է խորհրդապահութիւնը:

Բ. հաղորդագրութեան մէջ ազգային մարմինները խոստանում են նաեւ «օրինական միջոցներով» փակել «անհիմն մեկնաբանութիւններ» անողների բերանը, ինչը ներկայ պարագայում ազգային արժանապատուութեան առաջնահերթ խնդիրն է :

Եւ քանի որ խօսքը օրինականութեան մասին է, ասենք, որ մեր Ազգ. Իշխ.ի ոչ մի կանոնագրութեան մէջ չփնտրէք «Դիւան առաջնորդարանի» անունով մարմին կամ կառոյց կամ նման մի բան, բայց դէ, նման բան, ուզենք, թէ չուզենք, գոյութիւն ունի, եւ այնքան էլ մէջքը պինդ է, որ կարողանում է թեմակալ Առաջնորդի, Պատգամաւորական ժողովի, թեմական ու Կրօնական Խորհրդների եւ բոլոր մանր ու խոշոր ազգային մարմինների անունից յայտարարութիւններ անել: Սա, իհարկէ չի նշանակում, որ այդ մարմինները խուսա-

փում են պատասխանատուութիւնից եւ հանդէս են գալիս գոյութիւն չունեցող «Դիւանի» անունով, այլ միայն ու միայն խորհրդապահական նկատառումներից ելնելով են գրաւոր փաստաթղթում այդպէս հանդէս եկել:

Դ.-Նպատակասլացութիւն: Հաղորդագրութեան մէջ պարզ ու որոշ ասւած է, որ ազգային մարմինները միասնաբար այս բոլորը անում են. «...ձեռագրի էջերը վերադարձնելու նպատակով:» Մարդիկ այս կարեւոր հանգամանքը շեշտել են, որ յանկարծ որոշ անգիտակից մարդիկ անհիմն (էշ-էշ) մեկնաբանութիւններ չանեն ու չկարծեն, թէ, Տէրը մի արասցէ, այս բոլորը անպատակ է արւում կամ էլ դրա յետեւում ուրիշ նպատակ կայ:

Ե.- Նախանձախնդրութիւն: Սեւով սպիտակի վրայ գրել են. «Սպահանի Հայոց Թեմի Ազգային Մարմինները նախանձախնդիր են» եւ մանաւանդ շեշտել են, որ այդ նախանձախնդրութիւնը գլխաւորում է Սրբազան Հայրը: Էլի չէ՞ք հաւատում, ա՛յ անհաւատներ:

Զ.-Պատասխանատուութիւն: Սրա կենդանի վկան էլ հէնց այս գոյգ հաղորդագրութիւններն են, գումարած Նոր Զուղայի բոլոր միութիւնների եւ կազմակերպութիւնների հետ հրաւիրւած հանդիպումը, որտեղ սպառիչ զեկուցումներով ամէն ինչ պարզ բացատրեցին թեմակալ Առաջնորդն ու թեմական Խորհրդի նախագահը: Էլ ի՞նչ էք ուզում: Ե՞րբ էք տեսել, որ մեր յարգարժան իշխանութիւնները ընդամենը հինգ օրում երեք անգամ զեկուցում տան նոյն խնդրի մասին եւ գրաւոր ու բանաւոր լեզուով ասեն ու կրկնեն, թէ ազգային մարմինները, բոլորով անխտիր, պատասխանատուութիւնից չեն խուսափում, հասկանո՞ւմ էք, բոլորով, այսինքն, թէւ, ըստ կանոնագրի, վանքի թանգարանը գտնւում է թեմական Խորհրդի բարձր հովանաւորութեան ներքոյ, սակայն գերեզմանատան վարչութիւնն էլ իր բո-

լոր անդամներով նոյնքան պատասխանատու է թալանւած ձեռագրերի համար, որքան, ասենք, որեւէ թալանւած, հեռը տնիցս, գերեզմանի համար:

Ուրեմն, սիրելի ժողովուրդ, եսօր-ւանից կարող էք, ով որ վանքը ոտ է դնում, դռնապանից մինչեւ առաջնորդը, եսխեն բռնէք ու ոչ թէ բնակարան ու խանութ պահանջէք, այլ ասէք, բա մեր ձեռագրերը: Էլ ի՞նչ էք ուզում, ա՛յ, ա՛յ, ա՛յ, ա՛յ, ..... , ..... , ..... , եր:

Եւ վերջապէս սկզբունք եօթերորդ.

Ե.- Տիրակալութիւն: Թեմական խորհուրդը դիմում է «մեր», այսինքն իրենց ժողովրդին, եւ քանի որ այդ «մերի» սահմանները ճշտւած չեն, ուրեմն կարելի է եզրակացնել, որ խօսքը ողջ հայ ժողովրդի մասին է, եւ մեր Ազգ. Իշխ.-ը անխտիր համայն հայութեան իշխանութիւնն է, որի համար ամենեւին էլ մերոնք ու այլոք գոյութիւն չունի, հէնց դրա համար էլ մենք եւս մեր հերթին պարտք համարեցինք նրան կոչել մեր իշխանութիւն, որովհետեւ, եթէ ժողովուրդը իշխանութեանն է պատկանում, ուրեմն իշխանութիւնն էլ ժողովրդին է պատկանում, այսինքն՝ ժողովրդի տէրն ու տիրակալն է: Հիմա այդ կամաւոր կոյրերը անհիմն կերպով պնդեն թէ հայ ժողովուրդը անտէր է: Անտէրը դու՛ք էք, ա՛յ բացբերաններ:

Ահա, սիրելի ժողովուրդ, այս ամէնից յետոյ ինչ անուն տաս նրանց, որ զոյգ հաղորդագրութիւնների էութիւնը առանց հասկանալու կասկածի ենթարկեցին դրանց մեջ թաքնւած խորհուրդը: Առաջինին ասացին, կարճ է ու ոչինչ չի ասում, եկան երկրորդը երկարացրեցին, էլի ասացին երկար է ու էլի ոչինչ չի ասում, մինչդեռ, մենք անհերքելի փաստերով եկանք ապացուցելու, որ չուզողի աչքը դուրս, հաղորդագրութիւնները շատ լաւ էլ սեղմ են ու բովանդակալից, միայն թէ կարդացող ու հասկացող է պէտք:

Սիրելի ընթերցող, մենք եւս զուտ խորհրդապահական նպատակով, առանց խուսափելու պատասխանատուութիւնից սոյն գրութիւնը ստորագրում ենք՝ Ազատ Մտաւոր Ական:

## ԻՐԱՆԱՅԱՅ ՄԱՍՈՒԼԻ ԲՈՂՈՔԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

### ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՍԲ. ԱՄԵՆԱԹՐԿԻՉ ՎԱՆՔԻ ԹԱՆՆԻ ՇԵՏ ԱՌՆՉԻԱՍՏ ՄՊԱՆԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՅ՝ ՄԱՍՈՒԼԻ ՆԿԱՏՄԱՐԲ ՍՐՀԱՄԱՐՅԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄԸ ԽԱՆՏՈՒՄ Է ՀԱՅ ՀԱՄԱՅՆԻ ՏԵՂԵԿԱՑՒՄԸ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆԸ

Հասարակական, քաղաքական եւ այլ մարզերի, իրադարձութիւնների եւ խնդիրների տեղեկատուութիւնն ու լուսաբանումը մամուլի պարտականութիւնն է, ուստի եւ լրահոսքի բուն աղբիւրին հասնելու համար նա դիմում է ամենատարբեր կառոյցների ներկայացուցիչներին եւ անձանց: Իսկ վերջիններիս, նամանաւանդ կառոյցների պարտականութիւնն է, յարգելով հասարակութեան տեղեկացւած լինելու իրաւունքը, առանց խտրականութիւն դնելու մամուլի ներկայացուցիչների միջեւ, նրանց փոխանցել եւ տրամադրել իրենց ասելիքը:

Նոր Զուղայի Սբ. Ամենափրկիչ վանքի թանգարանից անյայտ պայմաններում հինգ մանրանկարների եւ երկու իւղանկար կտաւների անհետացման եւ Լոնդոնի աճուրդում դրանց յայտնուելու վերաբերեալ իրանահայ մամուլի կողմից հրապարակւած բացայայտման լայնամասշտաբ արձագանքը հայաստանեան եւ սփիւռքեան լրատւամիջոցներում եւ, փաստօրէն, Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդին պատասխանատուութեան առջեւ դնելուց յետոյ միայն, նշեալ կառոյցը հաստատելով թալանման լուրը, խոստացաւ հաղորդագրութեամբ հանդէս գալ այդ կապակցութեամբ:

Սակայն ի գարմանս իրանահայ մամուլի, Սպահանի հայոց թեմի Թեմական խորհուրդը հարցականներով լի իր «լուսաբանման» յայտարարութիւնը մամուլին յղելու փոխարէն, այն տրամադրեց միմիայն Թեհրանում տպագրուող ՀՅԴ պաշտօնաթերթ «Ալիք»-ին:

Թէ ի՞նչն էր, մինչեւ թալանւած իրերի մասին մամուլի հրապարակումներ կատարելը, Թեմական խորհրդի քար լռութեան պատճառը, կամ թէ այսօր ի՞նչն է մղում նշեալ խորհրդին, իր յայտարարութիւնները մամուլին յղելու փոխարէն, միմիայն դաշնակացական օրգանին տրամադրել, պարտաւոր են առաջին հերթին պատասխանելու իրենք՝ Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի պատասխանատուները:

Մեզ՝ ներքոյ ստորագրող Իրանահայ մամուլի ներկայացուցիչներիս, մնում է յայտարարել, որ յանցագործութեան քօղարկումը, նման ազգային իրերի թալանման նկատմամբ «խորհրդապահ» վերաբերումը՝ փաստօրէն թափանցիկ աշխատանքից խուսափելը, նշանակում է մեղսակցութիւն կատարւած յանցագործութեան մէջ:

Մենք՝ իրանահայ մամուլի ներկայացուցիչներս, յայտարարում ենք, որ Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի լրատւամիջոցների նկատմամբ նման ոտնձգութիւնը, փաստօրէն խտրական վերաբերումը ոտնահարում է նախ եւ առաջ հասարակութեան տեղեկացւածութեան իրաւունքը, որպէս ժողովրդավարական ամենաառաջնային իրաւունք: Մենք նման գործունէութիւնը, ի մասնաւորի Սփիւռքեան պայմաններում, որակում ենք քայքայիչ եւ կործանիչ:

18 յուլիսի 2011թ., Թեհրան

«Իրանահայեր» լրատւական ցանց/ «Արաքս» շաբաթաթերթ/  
«Յոյս» երկշաբաթաթերթ/ «Լոյս» ամսագիր

# ՄՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՋ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԴԻԻԱՆԻ ԵՐԿՐՈՐԳ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Սիրելի ժողովուրդ,

Արդեն մամուլից տեղեկացել էք մեր 9 յուլիսի 2011 թվականի հաղորդագրութեամբ փոխանցած լուրից՝ Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանի գրչագիր մատենաներից պատառիկների անհետացման մասին:

Ստորեւ փոխանցում ենք որոշ լուսաբանութիւններ՝ տեղի ունեցած դէպքի եւ մեր կողմից իրականացած աշխատանքների կապակցութեամբ:

Շուրջ երեք շաբաթ առաջ ստացւեցին էլեկտրոնային նամակներ՝ Անգլիայում եւ Ֆրանսիայում մեր բարեկամներից, որով հաղորդում էր, թէ Անգլիայի աճուրդի կենտրոններից մէկում աճուրդի են դրել երկու սրբապատկեր-կտաւներ եւ հայկական գրչագիր մատենաների պատառիկներ, մանրանկարչութիւն՝ 5 էջեր: Նամակագիրները մեր ուշադրութեանն էին յանձնում ստուգել դրանց պատկերները, թէ արդեօք դրանք պատկանում են Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանի՞ն թէ՞ ոչ:

Առաջնորդ Սրբազան Դօր եւ պատկան պատասխանատուների միջոցով անյապաղ սկսեց ստուգման գործը, որով վերոնշեալ եօթը ցուցանուշներից երեքի պարագան անմիջապէս հաստատուեց՝ հիմք ընդունելով Սիրարփի Տէր-Ներսիսեանի եւ Արբակ Մխիթարեանի «Սպահանի հայոց մանրանկարչութիւնները» գրքում լոյս տեսած լուսանկարները: Իսկ մնացեալ երկու մանրանկարչութիւն էջերի եւ սրբապատկեր կտաւների ստուգումը երկար ժամանակ պահանջեց, յատկապէս պատառիկների պարագայում՝ հաշի առնելով այն հանգամանքը, որ խօսքը վերաբերում էր ոչ թէ ամբողջ մատենանին, այլ առանձին էջերի, որի ստուգումը տասնեակ մատենաների յիշատակարանների ու ոճի մասնագիտական քննութիւն եւ ժամանակ էր պահանջում: Երկու սրբապատկեր-կտաւների ստուգման համար՝ հիմք ընդունուեց թանգարանի իրերի հին եւ նոր ցուցակ-մատենաները, որով հնարաւոր չէղաւ հաստատել դրանց պատկանելութիւնը, թէ եւ դրանց նկարչութեան ու շրջանակների ոճով այլ սրբապատկերներ ներկայիս էլ գոյութիւն ունեն թանգարանի իրերի մէջ: Հետեւաբար՝ Ձեր ազնիւ ուշադրութեանն ենք յանձնում, որ առաջին փուլում մեզ անհրաժեշտ էր հաստատել կամ մերժել նշեալ իրերի պատկանելութիւնը, այնուհետեւ համապատասխան քայլերը ձեռնարկել:

Հարկ ենք համարում նշել նոյնպէս, որ մանրանկարչութիւն էջերի անհետացման մասին մենք տեղեկացել ենք վերոնշեալ էլեկտրոնային նամակներն

ստանալուց եւ անհրաժեշտ ստուգումները կատարելուց յետոյ միայն, որը չի նշանակում, թէ դրանք անհետացել են ներկայ օրերում: Մեր պրպտումներն այս ուղղութեամբ եղել են տարիներ առաջ մի քանի առիթով արւած լուսանկարների համեմատութեամբ, որով պարզւել է, որ գրչագիր մատենաների նշեալ էջերի անհետացումը վաղեմութիւն ունի եւ նոր դէպք չէ, սակայն նոր է ի յայտ գալիս, իսկ դրա յստակ թւականի ճշգրտումը դեռեւս հնարաւոր չէ: Այդուհանդերձ՝ թեմիս ազգային մարմինները, անկախ դէպքի թւականից, չեն խուսափում պատասխանատուութիւնից եւ վճռական են իրենց ազգային յանձնառութեան մէջ՝ վերադարձնել պատառիկները եւ բացայայտել յանցագործութիւնը: Միաժամանակ, սակայն, գտնում ենք, որ անհիմն ու առանց ապացոյցների՝ մարդկանց անունների շահարկումն ու նրանց մեղադրելն անընդունելի են եւ բուն գործին վնասաբեր: Յայտնում ենք, որ այս ուղղութեամբ եւս թեմիս ազգային մարմինները օրինական միջոցներով հարկ եղած քայլերը կը ձեռնարկեն:

Թեմիս պատասխանատուները մի առ ժամանակ լռութիւն են պահպանել եւ հասարակութեանն իրազեկ չեն դարձրել կատարածի մասին, քանի որ, ինչպէս նշեցիմք, նախ պահանջւել է որոշ ժամանակ՝ կատարելու ստուգումները եւ ուսումնասիրելու մեր որդեգրելիք քայլերն ու հնարաւորութիւնները՝ գործը աւելի ազդու կերպով առաջ տանելու համար, որով կարելորւել է առաջնահերթաբար զբաղւել պատառիկների վերադարձման գործով, որի համար հաշի է առնել այս բնագաւառում մասնագէտ անհատների փորձն ու խորհուրդները, առ այն, որ որեւէ սխալ քայլ կամ տեղեկատուութիւն կը վտանգի պատառիկների վերադարձը՝ արտասահմանեան նշեալ աճուրդի կենտրոնից եւ դրա շարունակութեամբ՝ կը խանգարի յանցագործութեան բացայայտման գործընթացը, որը զուգահեռաբար եւ օրինական միջոցներով հետապնդւել ու հետապնդուում է մեր կողմից:

Վերջում մեր ժողովրդին կրկին դիմում ենք խուսափել անհիմն ու շփոթեցնող մեկնաբանութիւններից: Վստահ եղէք, որ այս գործում որեւէ նոր առաջընթացի մասին, յարմար ժամանակում, տեղեկ կը պահենք Ձեզ, ինչպէս անցեալում նմանօրինակ ցաւալի դէպքերի պարագայում:

ԴԻԻԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ  
ՄՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՋ ԹԵՄԻ  
Նոր Զուղայ  
14 յուլիսի 2011 թ.



Յուլիսի 6-ին «Հայելի» կայքը հրատարակեց Սեդրակ Գոջամանեանի հարցազրույցն ինձ հետ, որպես «Յոյս» երկշաբաթաթերթի խմբագիր, ուր դուրս էին մեր թերթի մասին առկայ մի շարք հարցեր: Մակայն իսկական հարցերը, առելի պարզ (ու մի քիչ էլ վիրատրական) լեզուով արծարծել էին հարցազրույցին յաջորդած մեկնաբանություններում: Թէեւ այնքան էլ բանական չէ մեկնաբանություններին պատասխանել առանձին յօդածով, սակայն քանի որ դրանց մեջ բարձրացել էին «Յոյս»-ի դէմ հնչող մի քանի կրկնող հարցեր ու մեղադրանքներ, առիթը պատեհ համարեցի պատասխանել դրանց: Այդ պատասխանը «Հայելի»-ն կայքում տեղադրեց Յուլիսի 18-ին: Ստերեո մեր ընթերցողի ուշադրութեանն ենք յանձնում հարցազրույցից մի հատուած եւ մեկնաբանությունների պատասխանը ամբողջութեամբ:

Ռ.Ս.

## «ՀԱՅԵԼԻ» ԿԱՅՔԻ ՀԱՐՋԱԶՐՈՅՉԸ «ՅՈՅՍ»-Ի ԽՄԲԱԳԻՐ Ռ. ՍԱՖԱՐԵԱՆԻ ՀԵՏ (ՀԱՏԻԱԾ)

*Սեդրակ Գոջամանեան*

**-Արդեօք «Յոյս»-ի վաճառքը կարողանում է փակել՞ ծախսերը:**

-Ծախսերը չի կարողանում փակել: Պարսկաստանում պարսկական թերթերն էլ չեն կարողանում փակել իրենց ծախսերը: Մի խօսքով հայերէն թերթ տպագրելու համար պիտի մէկը այն հովանաւորի, անընդհատ փող ծախսի: Կարող է այդ ծախսողը մի կազմակերպութիւն լինի, կամ էլ անհատ:

**-Ձեր խօսքերում նշեցիք, որ կազմակերպութիւնների կողմից հովանաւորող թերթերը չեն կարող անկախ լինել, կարելի՞ է նոյնը ասել «Յոյս»-ի եւ Պրն. Ահարոնեանի յարաբերութիւններում: Կամ ինքնըստինքեան արտօնատէրի տեսակէտների հիման վրայ չի կազմուում «Յոյս»-ը:**

-Թերթի աշխատանքի սկսման օրերին մի անգամ խմբագրական ժողովում այսպիսի հարց դուրս եկ, որ մեր ուղղութիւնը որոշենք, ես ասացի՝ չէ՛, մենք քանի մարդ ենք, տարբեր տեսակէտներով, եթէ ուզենք ուղղութիւն որոշենք, պիտի թերթ հանելու տեղ վիճաբանենք: Ես չեմ ձեւացնում, որ թերթի արտօնատէրն ու խմբագիրն ու յօդաւձագրերը բոլորը նոյն կարծիքներն ունեն ու «Յոյս»-ը միակարծիք

անձնակազմ ունի: Բայց մի բան կարող եմ յստակ ասել, որ «Յոյս»-ը չունի «ոչ ցանկալի» անձանց ցանկ: Եթէ նոյնիսկ արտօնատէրի տեսակէտի հակառակ միւս կամ պատասխան է գալիս, մենք տպագրում ենք: Ահա այս պրոֆեսիոնալ լրագրութեան սկզբունքի մասին է, որ «Յոյս»-ի խմբագիրն ու գրողներն ու արտօնատէրը համաձայն են:

**-Արդեօ՞ք համայնքային մի շարք կարեւոր հարցերում (արտագաղթ. օպտիմալացում...) «Յոյս»-ը ունի որոշակի տեսակէտ:**

-Ո՛չ, այսինքն չենք նստել նման հարցերի մասին խօսել ու ընդհանուր եզրակացութեան հասել: Բնականաբար իւրաքանչիւրս ունի իր տեսակէտը: Նոյնիսկ ես, որոշ տեղերում յայտնած տեսակէտներիս ժամանակ զգոյշ եմ, որ այն չհամարւի «Յոյս»-ի կարծիք:

**-Որպէս Ռոբերթ Սաֆարեան, ինչքանո՞վ էք ընդգրկած համայնքային-միութենական կեանքում:**

-Միջակ չափով: Այս մասին մտածել եմ. մի կողմից լաւ է, միւս կողմից վատ: Վատ է, քանի որ հարցերի մի շարք ծալքերին ծանօթ չես լինում: Լաւ, քանի որ նկատել եմ, որ երբեմն պէտք է հարցե-

րին մի քիչ հեռուից նայել, ընթերցողն էլ յաճախ այդ է ուզում: Որպէս նմուշ ասեմ այս կամ այն միութիւնում սովորութիւն դարձած մի շարք ձեռնարկներին անդրադառնալը այլեւս ոչ ոքի չի հետաքրքրում եւ դրանք ոչ ոք չի կարդում, երեւի բացի կազմակերպողներից: Մի անգամ ճարտարապետ Ռոստոմ Ոսկանեանի մեծարման երեկոյի լրատութեան համար մեզ բողոքի նամակ եկաւ, որ ինչո՞ւ չէք նշել, որ կազմակերպիչ միութեան կողմից ով է բացման խօսքը կարդացել: Պատճառն այն է, որ դա լրատուական արժէք չունի: Գիշտ է կազմակերպիչ միութեան անունը բնականաբար պիտի նշւի, սակայն ով է բարի գալուստ ասել...Իսկ դպրոցների հարցը, պատգամաւորական ժողովի անցուդարձը, եւ նման հարցերը այս տարիներում մօտիկից հետեւել եմ: Դա կարող էք տեսնել այդ հարցերի մասին «Յոյս»-ում հրատարակած իմ գրութիւններում:

**-Այս տարիներում ձեզ համար ծագած հակազդեցութիւնները կամ մեղադրանքները ի՞նչ են եղել:**

-Ինչու չէ: Անցեալ տարի մի ասմունքի փառատօնի մասին Քարմէն Ազարեանը մի քննադատական

յօղւած էր գրել. կազմակերպիչներին մէկը զանգահարեց ասաց՝ տրւած տեղեկութիւնները չեն համապատասխանում իրականութեանը: Ես փոխանցեցի, որ գրաւոր պատասխանի, մենք տպագրենք: Չընդունեց եւ շարունակեց պնդել, որ պիտի նշլի միւթի անճիշտ լինելը: Ես ասացի, որ եթէ սպասում էք, որ հէնց էս բոլորին հաստատեն ձեր ասածները, նման բան չեմ կարող անել, քանի որ ես ներկայ չեմ եղել: Իրականութիւնն այն է, որ ամէն մանրամասնութիւն չի լինի ստուգել, յետոյ տպագրել: Դա շատ դէպքերում հաւասար կը լինի չտպագրելուն: Սակայն կարելի է պատասխաններն էլ հրատարակել, որ ընթերցողը ինքը դատի: Մի խօսքով քննադատութեան հասկացողութիւնը մեր համայնքում թոյլ է: Այսօրայ դրութեամբ եթէ «Յոյս»-ը «Հայելի»-ի հրատարակութեանը դրական է անդրադառնում, դա չի նշանակում, որ չպիտի քննադատի այն. քննադատութիւնը չպիտի վերագրել դաւադրութեան: Մեր համայնքում հիմա քննադատութիւն համարեա գոյութիւն չունի, հէնց դրա համար էլ պիտի քննադատութիւններին ընթացք տալ: Եթէ նոյնիսկ որոշ չափով վիրաւորական հնչեն:


**-Ձեր հասցէին ուղղած մեղադրանքներից մէկն այն է, որ դուք խաթարում էք համայնքային համերաշխութիւնը: Ի՞նչ կատարեաք համար:**

-Ես համերաշխութիւն ասելով չեմ հասկանում, որ պիտի իրար չքննադատել, որովհետեւ եթէ նման բան լինի, դա դառնում է դաւադրութիւն հանրութեան դէմ: Այսինքն՝ մենք իրար հետ համաձայնութեան ենք գալիս, որ ես իրականութիւնը ձեր մասին չասեմ, դուք էլ՝ մեր մասին: Դա ճիշտ չի: Ճիշտն այն է, որ իրար գոյութիւնը ընդունենք: Ես դրանից եմ մեղանում, որ յաճախ դիմացինի գոյութիւնն անգամ չեն կարողանում տանել: Օրինակ իմ կարծիքով

«Ալիք»-ը ունի «սեւ լիստ»: Մի շարք «Յոյս»-ի յօղւածների մասին ես լսել եմ, որ ասել է, որ մօտեցումը ճիշտ չի, շատ բարի, եթէ այդպէս է, խնդրեմ պատասխանէք: Իհարկէ այս մօտեցումը միայն «Ալիք»-ում չի, ընդհանրապէս մեր համայնքային համակարգում գոյութիւն ունի այս մօտեցումը: Մտածում եմ դիմացինին պատասխան տալով՝ նրա համար քրէդիթ են ապահովում: Մտածում եմ պատասխանելով, դիմացինին մարդու

տեղ են դնում: Ես կարծում եմ՝ այո, իրար պիտի մարդու տեղ դնենք: Հաներաշխ նշանակում է, որ տարբեր կարծիքներ գոյութիւն ունենան, իրար հետ բախւեն, իրար քննադատեն եւ դա չի նշանակում դիմացինին մէջտեղից տանել: Նոյնիսկ այս հարցի մասին այսքան խօսելը, ցոյց է տալիս մեր յետամնացութիւնը, քանի որ հէնց հիմա Հայաստանում Դաշնակցութիւնը նոյն այս օրէնքներով է խաղում:

**ՀԱՐՅԱԶԻՐՈՅԻ ՎԵՐՉՈՒՄ ՏԵՂԱԳՐԻԱՍԾ ԸՄՍԵՆՈՆԵՐԻՅ ՄԻ ԸՆԵՍԸ**







# ՌՈՒՄԵՐԹ ՍԱՖԱՐԵԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ «ՀԱՅԵԼԻ»-Ի ՀԱՐՅԱԶՐՈՅՅԻ ՔԱՄԵՆԹԵՐԻՆ

Թոյլ տւէք խոստովանեն, որ ինձ հետ «Չայելի»-ի հարցազրոյցի վերջում տեղադրուած դէմ քաննեքները, կարողացի ցաւով. ոչ թէ այն պատճառով, որ դրանք դէմ էին, այլ նրա համար, որ լի էին թշնամանքով՝ գիտենք ձեր տեսակետների «իսկական դրդապատճառները», Ահարոնեանի մասին խօսելը «էջը մրոտել» է, պատգամաւորականը հետետոււմ էք «լրտեսով»: Ցաւալի է իմանալ, որ մի տեղ մի անժամօք մարդ ատում է քեզ: Ինքը քեզ ասում ես, ինչ գործ ունես այ մարդ, հաց ու ջուրդ է պակասում, զնա քո գործի յետելից, ինչ գործ ունես համայնքի հարցերի հետ: Եւ իրօք այդպէս էլ խորհուրդ է տալիս քաննեքներից մէկը: Իսկ մի ուրիշը ասում է. «Ռոբերթ դար սարգամիմէ աջայէք» (Ռոբերթը հրաշալիքների աշխարհում). այսինքն՝ դէլէթ խոշէ՞: Իրօք, երբեմն զգում ես երեւակայութիւններում ես ապրում, միամիտ ու լաւատես կարծում ես եւ խօսքերով որեւէ բան կարելի է փոխել: Խորհուրդ եմ տալիս՝ թող հայկական միջավայրը, զնա ֆիլմ քննադատութեամբ զբաղվիր: Ճիշտն ասած, յաճախ եմ տատանւել այդ բանն անել. ու արել եմ. տարիներ. իսկ եթէ այսօր հայերէնով իրանահայ համայնքում թերթ եմ խմբագրում, դա այնքան էլ կոնկրետ որոշումի արդիւնքը չէ: Իրանահայ համայնքը իմ հասարակական միջավայրն է. թէ ինչ է պատահում այստեղ ազդեցութիւն ունի իմ կեանքի, երեխաներիս դաստիարակութեան, հարազատներիս ընդհանուր զարգացման (կամ յետամնացութեան) վրայ: Ես հայկական միջավայրում ներկայ եմ շատ բնականաբար, ոչ ելնելով ռոմանտիկ

հայրենասիրական դրդապատճառներից, այլ շատ կոնկրետ, շօշափելի ձեւով: Այնպէս որ առայժմս պիտի մերժեմ հայկական միջավայրը թողնելու առաջարկը: Կամ, բայց թէ կը մնամ այս հրաշալիքների աշխարհում, մինչեւ երբ կը մնամ, չգիտեմ:

Թող խօսքը չերկարացնեն: Այդ քաննեքները ցաւալի էին, բայց միաժամանակ շահեկան: «Յոյս»-ի համար 100-ի առիթով, մեր թերթում մեզ շնորհաւորել են ու զնահատել (մի քիչ էլ քննադատել) մեր բարեկամները, հիմնականում մեր գրողները: Բայց իսկական խնդիրները պիտի լսել հակառակորդից: Ստորեւ կը փորձեն պատասխանել այդ հակառակորդների կողմից արտայայտուած երեք հիմնական հարցերին:

## Ա. «Յոյս»-ի արտօնատէր՝ Ահարոնեանի գործարարական գործունէութիւնը եւ «Յոյս»-ի սկզբունքները

Ինչպէս հարցազրոյցում ասել եմ, առանց մի կազմակերպութեան կամ անձնաւորութեան հովանաւորութեան, հնարաւոր չէ հայերէն թերթ հրատարակել: Հաւատացած եմ, որ եթէ հովանաւորողը լինի մի անձնաւորութիւն (ոչ թէ կուսակցութիւն), թերթը կարող է աւելի ազատ աշխատել, պատճառն էլ այն է, որ անձնաւորութիւնը բոլոր հարցերում եւ մանրամասնութիւններում կոնկրետ կարծիքներ եւ մօտեցումներ չունի: Այս դէպքում չկայ նաեւ կուսակցական բիւրոկրատիան, որով պիտի վաւերացւի բոլոր քաղաքականութիւնները: Մի քաննեք գրող զարմանում է, թէ «Միթէ կը լինի մի հոգի փող տայ ու

թողնի ինչ ուզում են գրեն»: Ես այդպէս բան չեմ ասել: Ի վերջոյ ով փող է ծախսում, ունի իր նպատակները: Բոլորս ունենք մեր նպատակները եւ դրանք երբեմն մասամբ համընկնում են: Մարդկանց անձնական հոգեբանական նպատակները դժւար է հասկանալ: Սակայն կոնկրետ մի հիմնական հարցում եղել է համաձայնութիւն. «թող մարդիկ իրենց խօսքերն ասեն, մենք կը տպագրենք, անկախ նրանց գաղափարական եւ այլ պատկանելութիւնից»: Սիրելիներ, աչքներս չփակենք, մեր համայնքում եթէ աննախադէպ չէ, հազաւդէ է, որ մի թերթ իր դէմ գրուած յօդուածներ տպագրի: Մենք այդ բանն անում ենք: Ասում էք չէ, փորձէք: Ասում էք չէ, «Յոյս»-ի հարիւր համարներ են տպագրուել, կարդացէք եւ ապացուցէք, որ այդպէս չէ: Ձեւն այդ է, ոչ թէ քրքրել մարդկանց գործարարական փարլանդները: Դա բոլորովին հարցից դուրս է: Թողէք այսպէս հարցնեն. եթէ պարոն Ահարոնեանի փողերը նւիրատուէին «Աարարտ»-ին կամ մի այլ «ընդունելի» միութեան կամ ձեռնարկի, արդեօք այդ դէպքում էլ նոյնքան կը վրդովւէի՞ք: Արդեօք բացի ա՞յս է, որ Ահարոնեանի փողը քանի գնում է ձեր ցանկացած գործերում, ոչ մի հարց չկայ, իսկ եթէ յատկացում է մի անկախ թերթ հրատարակելու, որի մօտեցումները ձեր դուրը չի գալիս, յետոյ յիշում էք, որ «Ահարոնեանը Հայաստանում մարդկանց շէնքերը թահիլ չի տուել»: Իհարկէ, ինչպէս հարցազրոյցում էլ ասել եմ, չեմ ձեւացնում, որ ամէն բան ճիշտ այնպէս է, որ ես եմ ցանկանում: Քաննեքներից մէկում, ասել է, որ Էջմիածնի

նւիրւած գորգերի պատկերը թերթի շապիկ դարձնելու մասին: Յամաձայն են, այդ միւթը շապիկը զբաղեցնելու աստիճանի լրատւական արժէք չունի: Երեւի եթէ պարոն Ահարոնեանը չլինէր թերթի արտոնատէրը, դա չէր էլ յայտնւի շապիկի վրայ: Բայց բարեկամներ, մենք երեւակայութիւնների աշխարհում չենք ապրում, ոչ էլ ես ձեւացնում եմ ամէն բանի մասին թերթի արտոնատիրոջ հետ բացարձակապէս նոյն կարծիքին ենք: Իրական աշխարհը ինչպէս Յայաստանում են ասում, կոմպրոմիսների աշխարհ է: Սակայն պիտի տեսնել այդ կոմպրոմիսներով հանդերձ, գործի արդիւնքում, արդէօք մեծամասնաբար պահել են այն սկզբունքները, որոնց յաւակնել եմ հարցազոյցում:

#### **Բ. Համայնքը, պատգամաւորական ժողովը եւ «Յոյս»-ը**

«... Պատգամաւորականին հետեւում են: Ինչպէ՞ս, լրտեսով: Այդքան կռիւ եղաւ, որ համայնքային մամուլը գայ, սկի չէք գնացել ժողովին: ...» այսպէս է ասել քաննութեան մէկուն:

Այստեղ աղաւաղում կայ: «Յոյս»-ի համարներ 71-ում եւ 83-ում ընդարձակ եւ պատկերազարդ հաղորդագրութիւն կայ պատգամաւորական ժողովի նիստերի մասին: Երկրորդի շապիկը եւս յատկացւած է թեմական խորհրդի ատենապետի դոկտ. Այիդա Յովհաննիսեանի լուսանկարին: Իսկ 96 եւ 99 համարներում տպագրել ենք պատգամաւորներից երկուսի՝ Ալբերթ Քոչարեանի եւ Ռուբիկ Սարգարեանի կարծիքները թեմական խորհրդի ընտրութիւնների մասին: Եթէ մենք ներկայ չենք եղել թեմականի զեկոյցին եւ նոր թեմականի ընտրութեան յատկացւած նիստերին, նաեւ անտարբեր չենք մնացել անցուդարձի նկատմամբ: Այստեղ կայ նաեւ մի մեծ թիրիմացութիւն: Պատգամաւորականի ժողովներին մասնակցելը մամուլի

իրաւունքն է, ոչ թէ պարտականութիւնը: Մամուլի ներկայացուցիչները ժողովի անդամներ չեն, որոնց պիտի ամէն նիստի ներկայ-բացակայ անել եւ նախատել: Եթէ ընդհանրապէս ՊԺ-ի մասին բան հրատարակած չլինէր «Յոյս»-ում, այդ քննադատութիւնը ճիշտ կը լինէր: Բայց մամուլը ունի իր սահմանափակ հնարաւորութիւնները եւ պարտադիր չէ բոլոր նիստերին ներկայ լինել: Մենք ոչ միայն կարեւորում ենք ՊԺ-ի անցուդարձը եւ ներկայ կը գտնուենք դրա նիստերին, այլ նաեւ կը պահանջենք անվի թափանցիկ մօտեցում ՊԺ-ի եւ թեմական խորհրդի կողմից, որը կարող է հեշտացնել լրատութիւնը, այն է՝ հրատարակել թեմականի տարեկան եւ երկամեայ զեկուցումները, հրատարակել ազգային գոյքի ցուցակը եւ տարեկան բիւջէները: Դրանք հնարաւոր կը դարձնեն վերլուծել հարցերը առանց անպայման ներկայ գտնուելու բոլոր նիստերին: Առ ի տեղեկութիւն, նախահաշիւը քննարկող նիստին, ժամեր ստիպւած էի յետեւել բիւջէի շուրջ բանակցութիւններին, առանց ձեռքի տակ ունենալու մի օրինակ բիւջէից, որը լրագրողներին չէր տրամադրել: Նոյնիսկ հանդիպման վերջում խնդրեցի մի օրինակ ունենալ, թերը ստուգելու եւ վրիպումներից խուսափելու համար, որն ասեց պիտի քննարկի դիւանում:

Ինչ վերաբերում է համայնքային ձեռնարկներին, անկասկած դրանցից շատերը ծանծրալի են եւ դրանց մասնակցելը կամ լրատութիւնը ոչ մի հետաքրքրութիւն չի կարող ներկայացնել: Չէ՞ք տեսնում երիտասարդութիւնն էլ չի մասնակցում դրանց: Դրանց կարեւորներին, որոնցում մի արտակարգ բան է պատահում իհարկէ պիտի մասնակցել եւ մենք փորձում ենք մեր հնարաւորութիւնների սահմաններում մասնակցել: Համայնքային հարցերի մասին կարծիք տալու եւ դրանք վերլու-

ծելու համար պէտք չէ դրանց բոլորին մասնակցել, մի քիչ էլ պիտի կարողանալ հեռուից նայել հարցերին, դրանք վերլուծել: Արդէօք «Յոյս»-ում հրատարակւած իմ գրութիւնները եւ տեսակետները համայնքային հարցերի շուրջ իրաւացի՞ են եղել թէ՞ ոչ, արդէօք դրանք ներկայացնու՞մ են որեւէ արժէք, դա պիտի պատասխանել քննարկելով այդ գրութիւնները:

#### **Գ. Ալիքը սեւ լիստ ունի՞**

Տեսէք, երբ ասում եմ «Ալիք»-ը սեւ լիստ ունի, բնականաբար դա չի նշանակում, որ ես գիտեմ, որ օրաթերթի տնօրէնի կամ խմբագրի դարակում այդպիտի ցանկ կայ: Դա ես չեմ կարող իմանալ: Ինչը կարող եմ իմանալ այդ թերթի ընդհանուր մօտեցումն է: Խօսքը չերկարացնելու համար, խորհուրդ եմ տալիս դիմել «Յոյս»-ի համար 38-ի էջ 10-ում հրատարակւած «Անհանդուրժողականութեան պատկերը» միւթին, բայց քանի որ կարելի է այդ համարը ձեր տրամադրութեան տակ չլինի, բացատրեմ, որ դա մի լուսանկար է, որից մկրատել է «Արաքս» թերթի խմբագիր Սովսէս քեշիշեանի պատկերը: Դա Հանելու, զեղչելու, սեւ լիստելու ցայտուն պատկեր է: Գաղտնիք չէ, որ «Ալիք»-ը նոյնիսկ խուսափում է, հիմնարկութիւնների վճարովի յայտարարութիւնը տպագրել, եթէ դրա տէրը կամ արտօնատէրը ցանկալի անձնաւորութիւն չէ:

Արդէօք մենք էլ քի՞չ ենք գրել «Ալիք»-ի մասին: Հնարաւոր է: Սակայն անպայման սեւ լիստ չունենք: Հէնց այստեղ յայտարարում եմ, որ որեւէ Ալիքական կամ դաշնակցական անձնաւորութեան քննադատական յօդւածը պատրաստ ենք հրատարակել «Յոյս»-ում: Թող «Ալիք»-ն էլ յայտարարի, որ կը հրատարակի ցանկացած ոչ-դաշնակցականի գրչին պատկանող քննադատական յօդւած:

# ԿԵՆՍԱԷԹԱՆՈԼԸ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ Ե ՖՈՍԻԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔՆԵՐԻՆ

Բրածոյական (ֆոսիլային) վառելիքների, յատկապես նաև քի սպառմանն առնչող կենսոլորտային մտահոգութիւնները հետազոտողներից շատերին յանգեցրել է այն բանի, որ այս վառելիքներին փոխարինող նոր աղբիւներ պէտք է որոնել ու գտնել:

Այսօր կենսաէթանոլը արծարծւում է որպէս լաւագոյն փոխարինողը բրածոյական վառելիքների: Սա մի նորաստեղծ վառելանիւթ է, որը գոյանում է գիւղատնտեսական սննդամթերքի պաշարներից եւ կարող է զգալի չափով վերացնել կենսոլորտային այն մտահոգութիւնները, որոնք ծագել են բրածոյական վառելիքների գործածութեան հետեւանքով:

Այս նիւթը կարող է որպէս կենսավառելիք օգտագործել բենզինի փոխարէն եւ հէնց ներկայում էլ լայն մասշտաբով Բրազիլիայում գործածւում է թեթեւ երթելակութեան միջոցներում: Իսկ ԱՄՆ-ում որպէս թաւածին առաջացնող մի նիւթ անելացւում է բենզինին:

Կենսաէթանոլն ստացւում է կենսազանգածների շաքարային մասերի մակարդումից: Այս վառելանիւթը հակառակ բրածոյական վառելիքների, որոնց աղբիւրները սահմանափակ են, ձեռք են բերւում հացահատիկների, շաքարի ճակնդեղի ու եգիպտացորենի պէս վերամշակող աղբիւրներից:

Այս վառելանիւթը մի այլ առանելութիւն էլ ունի, դա այն է, որ նազեցնում է ջերմոցային գազերի տարածումը: Ճանապարհային երթելակութեան համակարգը 22 տոկոսով անելացնում է ջերմոցային գազերի տարածումը, իսկ կենսաէթանոլի գործածումը 70 տոկոսով նազեցնում է օդում շմուլի (դիօքսիդ քարբոն) տարածումը, մինչեւ անգամ հին մեքենաների մէջ դրա օգտագործումը բենզինի փոխարէն դարձեալ 25 տոկոսով պակսեցնում է թունաւոր գազի արտանետումը, հետեւաբար օդն անելի անապակ է դառնում եւ կլիմայական քիչ փոփոխութիւններ է առաջանում:

Մասնագէտները նշում են, թէ ճիշտ է կենսաէթանոլը վառելիք CO2 է արծակում, սակայն նոյնչափ էլ ներծծւում է բոյսերի աճելու ժամանակ, ուստի տեսականօրէն այս վառելիքի համատեղման արդիւնքը զրօ է ջերմոցային գազերի արտազատման ու տարածման տեսակէտից:

Ի դէպ, պիտի նշել, որ կենսաէթանոլի խառնուրդը նաև քի հետ պակսեցնում է վերջինիս արտադրման պահանջարկը եւ այսպիսով քջացնում նաև արտադրող երկրներին ենթակայ լինելուց, ապա եւ կանխում նաև քիային աղբիւրների փոշիացումը, ապահովելով վառելիքի անելի մեծ պաշարներ:

Ըստ փորձագէտների, կենսաէթանոլն անելի քիչ թոյն է պարունակում, քան բրածոյական վառելիքները:

Եթէ էթանոլ կրող մի նաւի ամբողջ պարունակութիւնը ծովը թափի, բարձր թանձրութեան պատճառով մակերեսային դժւարութիւններ կարող է առաջ բերել, մինչեւ իսկ մասամբ կարող է ազդել ծովային կենդանիների վրայ: Սակայն այս ազդեցութիւնները հեշտութեամբ կարելի է վերացնել օդի սրսկումով: Բացի այդ, էթանոլի թանձրութիւնն արագօրէն նազում է ջրի հետ ռէակցիա ունենալու դէպքում, այլ կերպ ասած, էթանոլը արագօրէն սկսում է կենսաքայքայման ենթարկւել:

Մասնագէտները պնդում են, որ կենսաէթանոլի օգտագործումը խրախուսելու դէպքում, այս նպատակին ծառայող անհրաժեշտ գիւղմթերքների մշակումը կը զարգացնի գիւղատնտեսութիւնը:

Կենսաէթանոլի մօտաւորապէս 5 տոկոսը կարելի է սովորական վառելիքին խառնել առանց ատոմոքիլի շարժիչում որեւէ փոփոխութիւն մտցնելու, այսինքն՝ ցածր թանձրութեան դէպքում դա համերաշխ է ներկայ շարժիչների հետ եւ անսարքութիւն չի բերում, ուստի առանց մտահոգութեան կարելի է օգտագործել:

Դեռ ենթադրւում է, որ կենսաէթանոլը կարելի է փոխարինել բենզինի մէջ օգտագործող MTBE-ին, որը 1980 թականից սկսած անելացւել է առանց արժիքի բենզինին բռնկւելու նպատակով: Այն մեծապէս կարող է լուծել ջրի մէջ ու բաւականին դիմացկուն է կենսաքիմիական վերլուծութեան հանդէպ:


Բնապահպանութեան մասնագէտների կարծիքով կենսաէթանոլը լայն ծաւալով օգտագործելու դէպքում կարող է ներծծել ու խառնել ստորջրեայ աղբիւրներին եւ նստածքի վայրից շարժել հեռաւոր տարածութիւններ եւ որպէս վնասակար գործօն առաջ բերել աղտոտւածութիւն: Նրանք նշում են, թէ երկրի մակերեսի մօտ կենսաէթանոլի գործածութիւնը նազեցնում է օդի օզոնը, իսկ երկրի մակերեսի մօտ օզոնի նազումը պատճառ կը դառնայ քթի, աչքի, կոկորդի բորբոքմանն ու թերի շնչառութեանը, հազի եւ շնչարգելութեանը: Բացի այդ կը վնասի նաեւ բուսական ծածկոյթին, ծառերին ու թփերին: Այդ մասնագէտներն իմիջիայլոց,

ընդունելով, որ կենսաէքանոլի օգտագործման տարածումը կը բերի գիւղատնտեսական էկոնոմիկայի զարգացում, սակայն նաեւ ընդգծում են, թէ դրան հասնելու համար անհրաժեշտ են գիւղատնտեսական վիթխարի հողատարածքներ, որպէսզի ստանալ հսկայական սննդամթերքի աղբիւրներ: Ահա թէ այդ դժուարութիւնները յաղթահարելու համար մասնագէտներն ինչպիսի առաջարկ են անում: Նրանց կարծիքով այսօր անհրաժեշտ է շարժել ցեւիկը այնպիսի էքանոլ արտադրելու ուղղութեամբ, որոնք ձեռք են բերում փայտից եւ բոյսերից ու սննդի համար չօգտագործուող մասերից: Այդպիսի միւթ ստանալու համար կարելի է օգտուել գիւղատնտեսական թափօններից, ինչպիսին են բոյսերի ցողունը, տերեւը, թեփուկը, փայտահատումներից գոյացած թեփը, տաշեղը, մեռած չորացած ծառերը, քաղաքային չոր անելցուկները, աղբերը, թղթեղէնը եւ այլն:

Մարդկային միջավայրի պահպանման մասնագէտները նաեւ այն բանի են, թէ ջրիմուռի մշակումը լաւագոյն տարբերակն է կենսաէքանոլ ստանալու համար. այսպէս, այն ցանում, հնձում, ապա արելի տակ մակարդում եւ ուղղակի էքանոլ է ստացում:

Ըստ էներգիայի միջազգային գործակալութեան տւեալների, կենսաէքանոլի օգտագործման պոտենցիալը որպէս վառելիք այնքան հաւատ է ներշնչում, որ նախատեսւում է այս վառելիքը խոշոր ու նշանակալի դեր կատարի փոխադրամիջոցների ապագայ գործընթացում: Քաղաքային չոր աղբերից այս նպատակով օգտուելը կը նպաստի աղբերի նպատակայարմար օգտագործմանը եւ կը նպաստի աղտոտութեան նւազեցմանը:

Ներկայումս զարգացած որոշ երկրներում ակտիւնեւորելու վառելիքում օգտագործում է կենսա-



էքանոլ, եւ այս առումով Բրազիլիան վարկանշային աղիւսակի առաջին հորիզոնականում է գտնուում կենսավառելիքների 18 տոկոսի սպառմամբ: Բրազիլիայից յետոյ այս բնագաւառում աշխարհում առաջատար են Ամերիկան եւ Եւրոմիութեան անդամ երկրները:

Իրանում եւս այս ուղղութեամբ բաւական հետազօտութիւններ են կատարուել եւ աշխատանք է տարուել E5 բենզին հայթայթելու եւ օգտագործելու համար:

Իրանի նախնադրների ազգային ընկերութեան գործադիր տնօրէնը այս կարեւորութեան անդրադառնալով նշել է, թէ բենզինին 5 տոկոս էքանոլ խառնելով այժմ հնարաւոր է E5 բենզին տրամադրել բենզինի լցման կէտերում: Նա ապա յաւելեց, գիտական ու փորձնական բազմակողմանի աշխատանքներ են տարւում երկրի տարբեր քաղաքներում ու յատկապէս Ահւազում E5 բենզին ամբարելու նոր պահեստներ պատրաստելու եւ արտադրելու համար: Նա այնուհետեւ ընդգծեց, թէ առաջիկայ տարւայ համար մասնաւոր հատւածը պատրաստականութիւն է յայտնել օրական 100-200 հազար լիտր E5 բենզին արտադրել, որը կարելի է օգտագործել երկրի տարածքում

գործող ակտիւնեւորում եւ որեւէ խնդիր չի յարուցի դրանց բռնկման համակարգում:

Այսպիսով ինչքան էլ որ մեր երկրում ուշացած լինենք էքանոլի արդիւնաբերութեան գործում, այդուհանդերձ, այս բնագաւառում վերելք արձանագրելը յուսալի երեւոյթ է եւ մեր առջեւ վառ հորիզոններ է բացւում քաղաքների աղտոտութեան նւազեցման, անապակ օդ շնչելու ակնկալութեան, բրածոյ վառելիքի պաշարների խնայողութեան եւ համեմատաբար էժան գնով վառելիք ձեռք բերելու ուղղութեամբ:

*Աղբիւր՝ Իրանի էքանոլ արտադրողների արհմիութեան «էքանոլ» պարբերաբերք*

*թարգմանեց՝ ժ. Մնացականեան*

Առանց չափազանցնելու կարելի է ասել թե բնութեան մասին բոլոր վաւերագրական ֆիլմերի մէջ, երկիր մուտրակից վերցւած իր պատկերներով եւ իր իւրայատուկ նկարահանումով, «Տուն»-ը

ամէնից լաւն է: Նրա հիանալի պատկերները գերում է իւրաքանչիւր հանդիսատեսի:

Այս ֆիլմը ինչ-որ նոր յեղաշրջում է առաջացրել վաւերագրական ֆիլմեր ստեղծելու ոլորտում:

# ՇԵՏԱՔՐՔԻՐ ՎԱՒԵ «ՏՈՒՆ»



# ՐԱԳՐԱԿԱՆ ՖԻԼՄ Ի Ն »



Նրա երաժշտությունը, որը ստեղծել է աշխարհի մի շարք երկրների ժողովրդական երգերից, ինչպես նաև իրանական երաժշտությունից, կրկնապատիկ է զեղեցկացրել նրան: Մի խօսքով «Տուն»-ը բնութեան մասին ամենագեղեցիկ վաւերագրականն է:

«Տուն»-ի հեղինակն է Իան-Արտուս Բերտրանը (Yann Arthus-Bertrand): Իր ֆիլմում նա խօսում է տիեզերքում գտնուող մեր տան, երկիր մոլորակի մասին: Այն նկարահանել է լրիւօրէն օդային նկարահանումով, աշխարհում գտնուող 54 երկրներից: Ինչպէս նաև ցուցադրել է երկրի կենսաբանական զանազանութիւնը եւ այն փաստը թէ մարդ արարածը ինչպէս է այն ոչնչացնում: Այս ֆիլմը 2009 թւականի Յունիսի 5-ին

ցուցադրուեց աշխարհի 181 երկրներում եւ մինչ այսօր համարաւում է պատմութեան մէջ ամենշատ ցուցադրուած կինօն: Այն ստեղծել է Goodplanet ընկերութեան եւ մի շարք ընկերութիւնների հովանաւորութեամբ, որոնցից են Gucci, Puma, Alexander McQueen, Ellos, Fnac, CFAO, Bottega Veneta, Sergio Rossi, Boucheron,... : Գործին մասնակցել է 88000 մարդ:

Ֆիլմում անընդմէջ խօսւում է բնութեան մէջ գտնուող տարբեր էակների, ինչպէս նաև մարդու, եւ բնութեան ներդաշնակութեան մասին: Ինչպէս նաև այն բանի մասին թէ մարդը իր կատարած գործողութիւններով, հրդեհներով, նաֆթային հորատումներով բաւականին մեծ տարածութիւն է ստեղծել իր եւ բնութեան միջեւ:

շար. էջ 23



## ՍՏԱՆԳ ՀՍԻՈՎ ԵՒ ՆՈՒԳԵԼՈՎ

### Բաղադրույթին

Հալի կրծքամիս	250 գր.
Նուդել	2 կապ
Սոխ կամ	1 գլուխ
Սոխուկ	մի կապ
Սունկ	1 կապ
Տոլմայի պղպեղ	մի քանի հատ
գոյնզգոյն	
Սեւ ձիթապտուղ	100 գր.
Կիտրոն	1 հատ
Մայրոնեզ	ըստ ճաշակի




### Պատրաստման եղանակ

Հալի կրծքամիսը եփել ու քառակուսի-քառակուսի կտրատել: Նուդելը եռման ջրի մեջ գցել, աւելացնել մի քիչ կարի եւ մի քանի թոպէ խաշել մինչեւ փափկի եւ բացւի: Սունկը եւ տոլմայի գոյնզգոյն պղպեղները, սոխը կամ սոխուկը մանր կտրատել, ապա հալի մսի ու ջուրը քաշած նուդելի հետ խառնել. վերջում աւելացնել սեւ ձիթապտուղը եւ մայրոնեզը: Կարող էք ըստ ձեր ճաշակի սալաղը զարդարել թէ ձիթապտղով եւ թէ մաղադանոսով: Պատրաստած սալաղը սառնարան դնել որպէսզի սառի, ապա մատուցել:

### Բ Ա Ր Ի Ա Ն Ո Ր Ժ Ա Վ





շար. էջ 21-ից

Իսկ վերջում խօսուում է թե ինչպես կարելի է միջազգային կազմակերպությունների եւ երկրների համագործակցութեամբ փրկել եւ պահպանել բնութիւնը:

Ֆիլմի պատմիչն է Գլեն Քլոզը: Պէտք է ասելացնել, որ «Տուն»-ը առաջարկուում է բոլոր նրանց, ովքեր ցանկանում են ինչ-որ նոր լեզու սովորել, քանի որ այն իր մէջ պարունակում է 100 ասելի գեղեցիկ նախադասութիւններ: Ֆիլմի երաժշտութեան մի հատւածը, 64-ից մինչեւ 65-րդ րոպէն, յայտնի գրող՝ Էդբալ Լահուրիի բանաստեղծութիւնն է: Այն կատարուում են Աշքան Քամանգարին, Սէյեդ Մոհամմադ Յանջանին եւ Սինա Ահան Աբադին:

«Տուն» վաւերագրական ֆիլմի յատկանիշներից են ամենաբարձր որակը, AC3, 6ch ձայնային տւեալներով եւ Full D1 – 720\*480 պատկերով, յատուկ պարսկերէն յետգրութիւնը եւ գեղեցիկ երաժշտութիւնը: Այն կարելի է դիտել սովորական համակարգիչով ինչպէս նաեւ DVD Player-ով:

Արդեօք այսօ՞ր էլ երջանկութեան համար հարկաւոր է կառուցել չինական պարիսափ նման ինչ-որ պատ

Արդեօք գիտե՞ք թէ՛

-Լոս-Անջելեսի մեքենաները ասելի շատ են քան այնտեղի բնակիչները.

-Ամէն տարի մօտաւորապէս ոչնչանում է 13 հեկտար անտառներ.

-Աշխարհի ռազմական ծախսերը 12 անգամ ասելի շատ են քան զարգացող երկրներին ցուցաբերած օգնութիւնները.

-Օրական 5000 մարդ մահանում է ջրի աղտոտման պատճառով, իսկ մօտաւորապէս մէկ միլիարդ մարդ մաքուր ջրի ձեռնհասութիւն չունի.

-Աշխարհում մէկ միլիարդից ասելի սոված մարդ կայ.

-Աշխարհում գտնուող հատիկների 50%-ից ասելին կենդանիների կեր են դառնում.

-Երկրի 40% հողատարածքները ջրոռոգման հետեւանքով երկարատեւում ոչնչանում են.

-Ամէն 4 կաթնակեր կենդանիներից, 3 սողուններից եւ 8 թռչուններից մէկը ոչնչացման վտանգի տակ է.

-Որոշ կենդանական տեսակներ իրենց բնական մահից 1000 անգամ ասելի շուտ են մահանում.

-Չկնորսութեան հետեւանքով 75%-ով նւազում են ձկները.

-Վերջին 15 տարւայ ընթաց-

քում երկրի միջին ջերմութիւնը հասել է իր ամենաբարձր աստիճանին.

-Հիւսիսային եւ Հարաւային Բեւեռներում գտնուող սառույցի շերտը այս 40 տարւայ ընթացքում 40% բարակել է.

-Եւ ի վերջոյ մինչեւ 2050 թւականը ունենալու ենք եղանակի փոփոխման հետեւանքով մօտ 200 միլիոն թափառական:

Սրանք բոլորը այն միւթերն են, որոնց մասին կարող էք դիտել ֆիլմում: Քանի որ ֆիլմի բոլոր նկարահանումները կատարւել են զինուորական Cineflix լուսանկարչական ապառատով, որոշ երկրներ նկարահանող խմբին չեն թոյլատրել իրենց երկրում նկարահանութիւն իրագործել: Սակայն նրա երաժշտութեան բաժնում օգտագործւել են բոլոր երկրների աւանդական երաժշտութիւնները:

Եթէ ձեր առօրեայ կեանքում ընդամենը 2 ժամ ազատ ժամանակ էք ունենում եւ հիանում էք երկիր մոլորակով, ապա ձեզ առաջարկում ենք վստահ դիտել այս գեղեցիկ վաւերագրական ֆիլմը:

Թարգմանեց՝  
Արման Տ. Ստեփանեան



## ՎԱՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ ԱՆԸՆԳՄԷՋ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ

Արման Տ. Ստեփանեան



Համաձայն BoxingScene-ի, այժմ բանակցութիւններ են ընթանում IBF վարկածով առաջին միջին քաշային կարգում աշխարհի չեմպիոնի թեկնածուի կոչման համար Վանէս Մարտիրոսեանի եւ Դեանդրէ Լատիմորոյի միջեւ մենամարտի անցկացման վերաբերեալ: Այդ հանդիպման յաղթողը հնարաւորութիւն կը ստանայ մենամարտել IBF վարկածով չեմպիոն Կորնելիոս Բանդրէյջեմի հետ: Յիշեցնենք, որ հայազգի բռնցքամարտիկը բնակուում է մարզում է ԱՄՆ-ում: Պրոֆեսիոնալ ռինգում Վանէս Մարտիրոսեանը, ում ան-

լանում են նաեւ «գիշերային սարսափ» անցկացրել է 30 մենամարտ եւ ոչ մէկում չի պարտուել:

Վանէս Մարտիրոսեանը ծնւել է 1981 Մայիսի 1-ին Հայաստանի Արովեան քաղաքում: Նրա ընտանիքը տեղափոխուել է Գլենդէլ, Կալիֆորնիա, երբ նա չորս տարեկան էր: Նա սկսեց բռնցքամարտը, երբ ընդամենը եօթ տարեկան էր, երբ նրա հայրը, որը նաեւ սիրողական բռնցքամարտիկ էր պարզեց թէ իրենց մօտակայքում կային նախ մի մարզասրահ:

Մարտիրոսեանը դուրս եկաւ կրտսեր դպրոցից իր հօր միջոցով

եւ դարձաւ տնային աշակերտ: Նրա հայրը գիտակցում էր պէտք է պահել իր որդու մարտական ոգին ռինգում:

2004 թ. յաղթելով խաղը Հաիթիի Անդրեն Բերտոյի դէմ, որը առաջին ԱԻԲԱ - ամերիկեան 2004 թւականի օլիմպիական որակաւորման մրցաշարն էր Մեկզիկայի Տիխուլանա քաղաքում, նրան առիթ ընծայեց ընդունուել ԱՄՆ-ի օլիմպիական թիմում: Նա ներկայացրեց ԱՄՆ-ին 2004 թ. Օլիմպիական խաղերում եւ ձեռք բերեց հետեւեալ արդիւնքները.

Յաղթեց Բենամար Մասկինէին

(Ալժիր) 45-20

Ձիջեց Լորենցո Արագոն Արմենտերոսին (Կուբա), 11-20:

Վանեսը աւարտել է իր կարիերան սիրողական բռնցքամարտում 120 յաղթանակ, եւ 10 կորուստներով. Սակայն նրա բոլոր կորուստները բացառութեամբ Նիկ կասելի եւ Արագոնի դիմաց, վրէժխնդիր են եղել:

Նա 20 տարեկան էր ինչ դարձաւ պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ: Մարտիրոսեանի խորհրատուն է Շելլի Ֆինքելը, որը նաեւ խորհուրդ է տալիս աշխարհի չեմպիոն Ջէֆ Լէյսիին, Ֆերնանդո Վարզասին եւ շատ ուրիշներին: Իսկ նրա մարզիչն է Ֆրեդի Ռոպեր, ով է քւէարկել 2003 եւ 2006-ին որպէս տարւայ մարզիչ, Ամերիկայի Բռնցքամարտի Գրողների միութեան կողմից:

Սակայն դրանից յետոյ Մարտիրոսեանը պաշտպանելով իր տիտղոսը NABF եւ NABO WBO կրտսեր միջին քաշերում, միեւնոյն ժամանակ Յունիսին 2010, յաղթող ճանաչւեց նաեւ WBA Միջազգային վարկանիշով: 2011-ի Մարտի 19-ին, Վանեսը կրկին ռինգ վերադարձաւ՝ յաղթելով Ջո Գրինին Մոնրեալի Բէլլ կենտրոնում: Դրանից յետոյ նա ստացաւ հեշտ յաղթանակ նաեւ մեկզիկացի Բլադիմիր Յերնանդէսի դիմաց՝ երկրորդ ռաունդում նրան նոկ-աուտի ենթարկելով:

Անցած օրերում տեղի ունեցաւ Վանես Մարտիրոսեանի վերջին մենամարտը, որը նաեւ ցուցադրում էր Շանթ Յեռուստաընկերութիւնը, որում եւս մէկ անգամ Վանեսը փաստեց իր անպարտելիութիւնը բոլորին՝ 7-րդ ռաունդում տեխնիկական նոկ-աուտի ենթարկելով իր մեկզիկացի հակառակորդին՝ Սաուլ Ռոմանին:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՊՐՈՋԱՎԱՆՆԵՐԻ ՓԱՅՈՒՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Գրոզնիում աւարտեց բռնցքամարտի Եւրոպայի դպրոցականների առաջնութիւնը: Բաւական յաջող հանդէս եկաւ Հայաստանի ընտրանին՝ նւաճելով 2 ոսկէ, 4 արծաթ եւ 3 բրոնզէ մեդալ: Ոսկէ մեդալների արժանացան 38.5 կգ քաշային Գառնիկ Պապիկեանը եւ 41.5կգ Հրայր Շահվերդեանը: Արծաթէ մեդալներ նւաճեցին 40 կգ Ռազմիկ Անտոնեանը, 62կգ Վիկտոր Իւզիկնովիչը, 72կգ Ալեօշա Ստամբուլցեանը եւ +76կգ Գնէլ Մուրադեանը, բրոնզէ մեդալներ՝ 44.5կգ Սպարտակ Թամարեանը, 46կգ Արարատ Սիմոնեանը եւ 48կգ Ջաքար Խաչատրեանը: Թիմային պայքարում Հայաստանը զիջեց միայն Ռուսաստանին:

## ՎԱՃԱՌԷԼ Է ՖԵՂԵՐԵՐԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ



Յիրիխում բարեգործական աճուրդի ժամանակ վաճառւել է աշխարհի երրորդ ուժեղագոյն թեմիսիստ շէյքարացի Ռոջեր Ֆեղերերի աննախադէպ դիմանկարը: Արևեստի այդ գլուխգործոցի աննախադէպութիւնը կայանում է նրանում, որ նկարիչ ժան-Պիեր Բլանշերը նկարել է այն ընդամենը 4 րոպէում: Ընդ որում, թեմիսիստը ներկայ չի գտնւել դահլիճում: Բլանշերը նկարել է նրան կտաւի վրայ՝ յիշելով, յայտնում է gotennis.ru-ն: Credit-suisse.com-ի տեղեկութիւններով, այդ դիմանկարը վաճառւել է 19 210 դոլարով եւ այն գնել է Ernst&Young խոշոր աուդիտորական ընկերութիւնը: Ողջ գումարը փոխանցւել է Ռոջերի բարեգործական ֆոնդին, որն օգնում է Աֆրիկայի երեխաներին:

## ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ ԻՄՊԱՆԻԱՅՈՒՄ

Գրոսմայստեր Տիգրան Լ. Պետրոսեանը Իսպանիայի Բենասկ քաղաքում անցկացւող օփենում 10 հնարաւորից վաստակեց 8.5 միաւոր եւ միանձնեայ յաղթող ճանաչւեց: 2-րդ եւ 3-րդ տեղերն 8-ական միաւորով համապատասխանաբար կիսեցին Գրանդա Ջունիգան Պերուից եւ Ալեքսանդեր Դելչելը Բուլղարիայից: Գրոսմայստեր Ջաւէն Անդրիասեանը առաջատարից ետ մնաց մէկ միաւորով:



	6		7					
					1		4	
		2		3				
					2	5		
9		7		4				1
	5		9				3	
		1		2			7	
	2		6		8	9		
4								3

	6		7					
					1		4	
		2		3				
					2	5		
9		7		4				1
	5		9				3	
		1		2			7	
	2		6		8	9		
4								3

5					2	4		
	4							5
		6	3					7
		9						8
7	3					1		
				5	4			3
6			1	7				
		1				6		9
8						3		

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	ս	պ	ա	ս	ու	մ		հ	ա	ո	ա	լ	ա	ն	ք
2	պ	ա	ն	ի	ր		խ	ա	լ	ու	ղ	ի		ե	ր
3	ա	կ	ա	ն	ա	պ	ա	տ	ու	մ		ն	ո	ր	ք
4	ր		պ	ա	խ	ա	ր	ա	կ	ի	լ		ս	կ	ի
5	ա	ն	ա	զ		ն	ա	զ		ն	ի	ս	տ		ը
6	պ	ա	տ	ո	ը		ն	ա	ն	ի	ր		ա	տ	
7	ե	զ	ա	զ	ոյ	ն		ծ	ր	ա		ա	ն	ի	ծ
8	տ		լ		ն	ո	ր	ա	ք		խ	ծ	ի	պ	
9		կ	ի	ս	ա	տ		ո	ա	զ	ե	ա	կ		ծ
10	ք	ա	ն	ա	ր	ա	ի		կ	ր	ա	կ		լ	ի
11	ա	ր		փ	ի	ր		լ	ե	տ	մ	ա	ի	ու	
12	ն	ե	ղ	ո	ս		զ	ա	ր	ն	ա	ն	ի		կ
13	ա	կ	ա	ր		մ	ա	ս	տ	ա	կ		մ	ի	ր
14	լ	ի	ր		կ	ո	ղ	մ		կ	ա	ք	ա	ր	ե
15	ի	զ	ա	ք		մ	թ	ի	ն		լ	ա	կ	ո	տ

## Սու-Ղօ-Քու

1-9 թվերը տեղադրել հորիզոնական եւ ուղղահայեաց սիւնակներում այնպես, որ ոչ մի թիւ չկրկնւի ոչ սիւնակներում եւ ոչ էլ 3x3 տնակներում

## Անցեալ համարի պատմասիւսն

## ՎԱՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ ԱՆԸՆԴՄԷՋ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ

Արման Տ. Ստեփանեան



Համաձայն BoxingScene-ի, այժմ բանակցութիւններ են ընթանում IBF վարկածով առաջին միջին քաշային կարգում աշխարհի չեմպիոնի թեկնածուի կոչման համար Վանես Մարտիրոսեանի եւ Դեանդրէ Լատիմորոյի միջեւ մենամարտի անցկացման վերաբերեալ: Այդ հանդիպման յաղթողը հնարաւորութիւն կը ստանայ մենամարտել IBF վարկածով չեմպիոն Կորնելիուս Բանդրեյչեմի հետ: Յիշեցնենք, որ հայազգի բռնցքամարտիկը բնակուում եւ մարզուում է ԱՄՆ-ում: Պրոֆեսիոնալ ռինգում Վանես Մարտիրոսեանը, ում ան-

լանում են նաեւ «գիշերային սարսափ» անցկացրել է 30 մենամարտ եւ ոչ մէկում չի պարտուել:

Վանես Մարտիրոսեանը ծնւել է 1981 Մայիսի 1-ին Հայաստանի Արովեան քաղաքում: Նրա ընտանիքը տեղափոխուել է Գլենդէլ, Կալիֆորնիա, երբ նա չորս տարեկան էր: Նա սկսեց բռնցքամարտը, երբ ընդամենը եօթ տարեկան էր, երբ նրա հայրը, որը նաեւ սիրողական բռնցքամարտիկ էր պարզեց թէ իրենց մօտակայում կայինչ-որ մի մարզասրահ:

Մարտիրոսեանը դուրս եկաւ կրտսեր դպրոցից իր հօր միջոցով

եւ դարձաւ տնային -աշակերտ: Նրա հայրը գիտակցում էր պէտք է պահել իր որդու մարտական ոգին ռինգում:

2004 թ. յաղթելով խաղը Հաիթիի Անդրեն Բերտոյի դէմ, որը առաջին ԱԻԲԱ - ամերիկեան 2004 թւականի օլիմպիական որակաւորման մրցաշարն էր Մեկզիկայի Տիխուլանա քաղաքում, նրան առիթ ընծայեց ընդունուել ԱՄՆ-ի օլիմպիական թիմում: Նա ներկայացրեց ԱՄՆ-ին 2004 թ. Օլիմպիական խաղերում եւ ձեռք բերեց հետեւեալ արդիւնքները.

Յաղթեց Բենամար Մասկինէին

(Ալժիր) 45-20

Ձիջեց Լորենցո Արագոն Ար-մենտերոսին (Կուբա), 11-20

Վանեսը աւարտել է իր կարի-երան սիրողական բռնցքամար-տում 120 յաղթանակ, եւ 10 կո-րուստներով. Սակայն նրա բո-լոր կորուստները բացառութե-ամբ Նիկ կասելի եւ Արագոնի դիմաց, վրէժխնդիր են եղել:

Նա 20 տարեկան էր ինչ դար-ծաւ պրոֆեսիոնալ բռնցքամար-տիկ: Մարտիրոսեանի խորհրդա-տուն է Շելլի Ֆինքելը, որը նաեւ խորհուրդ է տալիս աշխարհի չեմպիոն Ջէֆ Լէյսիին, Ֆերնան-դո Վարզասին եւ շատ ուրիշնե-րին: Իսկ նրա մարզիչն է Ֆրեդի Ռոախը, ով է քւէարկել 2003 եւ 2006-ին որպէս տարւայ մարզիչ, Ամերիկայի Բռնցքամարտի Գրողների միութեան կողմից:

Սակայն դրանից յետոյ Մար-տիրոսեանը պաշտպանելով իր տիտղոսը NABF եւ NABO WBO կրտսեր միջին քաշերում, միեւ-նոյն ժամանակ Յունիսին 2010, յաղթող ճանաչւեց նաեւ WBA Միջազգային վարկանիշով: 2011-ի Մարտի 19 - ին, Վանեսը կրկին վերադարձաւ ռինգում՝ յաղթելով Ջո Գրինին Սոնրեալի Բէլլ կենտրոնում: Դրանից յետոյ նա ստացաւ հեշտ յաղթանակ նաեւ մեկզիկացի Բլադիմիր Յերնանդէսի դիմաց՝ երկրորդ ռաունդում նրա նոկ-աուտի են-թարկելով:

Անցած օրերում տեղի ունե-ցաւ Վանես Մարտիրոսեանի վերջին մենամարտը, որը նաեւ ցուցադրում էր Շանթ Յեռուս-տաընկերութիւնը, որում եւս մէկ անգամ Վանեսը փաստեց իր անպարտելիութիւնը բոլորին 7-րդ ռաունդում տեխնիկական նոկ-աուտի ենթարկելով իր մեկ-զիկացի հակառակորդին՝ Սաուլ Ռոմանին:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՊՐՈՋԱՎԱՆՆԵՐԻ ՓԱՅՆՈՒՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Գրողնիւմ աւարտեց բռնցքամարտի Եւրոպայի դպրոցականների առաջնութիւնը: Բաւական յաջող հանդէս եկաւ Յայաստանի ընտրանին՝ նւաճելով 2 ոսկէ, 4 արծաթ եւ 3 բրոնզէ մեդալ: Ոսկէ մեդալների արժա-նացան 38.5 կգ քաշային Գառնիկ Պապիկեանը եւ 41.5կգ Յրայր Շահ-վերդեանը: Արծաթ մեդալներ նւաճեցին 40 կգ Ռազմիկ Անտոնեանը, 62կգ Վիկտոր Իւզիկնովիչը, 72կգ Ալեօշա Ստամբուլցեանը եւ +76կգ Գնել Մուրադեանը, բրոնզէ մեդալներ՝ 44.5կգ Սպարտակ Թամարեանը, 46կգ Արարատ Սիմոնեանը եւ 48կգ Ջաքար Խաչատրեանը: Թիմային պայքա-րում Յայաստանը զիջեց միայն Ռուսաստանին:

## ՎԱՃԱՌԷԼ Է ՖԵՂԵՐԵՐԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ



Ցիւրիխում բարեգործական աճուրդի ժամանակ վաճառւել է աշխարհի երրորդ ուժեղագոյն թե-նիսիստ շէյքարացի Ռոջեր Ֆեղե-րերի աննախադէպ դիմանկարը: Արևեստի այդ գլուխգործոցի ան-նախադէպութիւնը կայանում է նրանում, որ նկարիչ ժան-Պիեր Բլանշերը նկարել է այն ընդամենը 4 րոպէում: Ընդ որում, թենիսիստը ներկայ չի գտնւել դահլիճում: Բլանշերը նկարել է նրան կտաւի վրայ՝ յիշելով, յայտնում է goten- nis.ru-ն: Credit-suisse.com-ի տեղե-

կութիւններով, այդ դիմանկարը վաճառւել է 19 210 դոլարով եւ այն գնել է Ernst&Young խոշոր աուդիտորական ընկերութիւնը: Ողջ գումարը փո-խանցւել է Ռոջերի բարեգործական ֆոնդին, որն օգնում է Աֆրիկայի երե-խաներին:

## ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ ԻՄՊԱՆԻԱՅՈՒՄ

Գրոսմայստեր Տիգրան Լ. Պետրոսեանը Իսպանիա-յի Բենասկ քաղաքում անցկացւող օփենում 10 հնարաւորից վաստակեց 8.5 միաւոր եւ միանձնեան յաղթող ճանաչւեց: 2-րդ եւ 3-րդ տեղերն 8-ական միաւորով համապատաս-խանաբար կիսեցին Գրանդա Ջունիգան Պե-րուից եւ Ալեքսանդեր Դել-չելը Բուլղարիայից: Գրոս-մայստեր Ջաւէն Անդրիա-սեանը առաջատարից ետ մնաց մէկ միաւորով:



	6		7					
					1		4	
		2		3				
					2	5		
9		7		4				1
	5		9				3	
		1		2			7	
	2		6		8	9		
4								3

	6		7					
					1		4	
		2		3				
					2	5		
9		7		4				1
	5		9				3	
		1		2			7	
	2		6		8	9		
4								3

5					2	4		
	4							5
		6	3					7
		9						8
7	3					1		
				5	4			3
6			1	7				
		1				6		9
8						3		

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	ս	պ	ա	ս	ու	մ		հ	ա	ո	ա	լ	ա	ն	ք
2	պ	ա	ն	ի	ր		խ	ա	լ	ու	ղ	ի		ե	ր
3	ա	կ	ա	ն	ա	պ	ա	տ	ու	մ		ն	ո	ր	ք
4	ր		պ	ա	խ	ա	ր	ա	կ	ի	լ		ս	կ	ի
5	ա	ն	ա	զ		ն	ա	զ		ն	ի	ս	տ		չ
6	պ	ա	տ	ո	չ		ն	ա	ն	ի	ր		ա	տ	
7	ե	զ	ա	զ	ոյ	ն		ծ	ր	ա		ա	ն	ի	ծ
8	տ		լ		ն	ո	ր	ա	ք		խ	ծ	ի	պ	
9		կ	ի	ս	ա	տ		ո	ա	զ	ե	ա	կ		ծ
10	ք	ա	ն	ա	ր	ա	ի		կ	ր	ա	կ		լ	ի
11	ա	ր		փ	ի	ր		լ	ե	տ	մ	ա	ի	ու	
12	ն	ե	ղ	ո	ս		զ	ա	ր	ն	ա	ն	ի		կ
13	ա	կ	ա	ր		մ	ա	ս	տ	ա	կ		մ	ի	ր
14	լ	ի	ր		կ	ո	ղ	մ		կ	ա	ք	ա	ր	ե
15	ի	զ	ա	ք		մ	թ	ի	ն		լ	ա	կ	ո	տ

## Սու-Ղօ-Քու

1-9 թվերը տեղադրել հորիզոնական եւ ուղղահայեաց սիւնակներում այնպես, որ ոչ մի թիւ չկրկնւի ոչ սիւնակներում եւ ոչ էլ 3x3 տնակներում

## Անցեալ համարի պատճախան

**«Յոյս» երկշաբաթաբեր լրագրական փառատուում է**

«Շիրմարդ»-ի լրագրավաճառի կրպակում

نارمک - انتهای شیرمرد جنوبی

تلفن: ۰۹۱۲-۱۸۳۶۲۱۸

**«Յոյս» երկշաբաթաբեր լրագրական փառատուում է**

«Աշխարաշրջիկ միութիւն»-ում

خیابان مجیدیه - کوچه نهم - پلاک ۱

تلفن: ۲۲۵۲۶۴۵۶

**«Յոյս» երկշաբաթաբեր լրագրական փառատուում է**

«Փասարգադ» Գրախանութ

بهار، بعد از سه روزدی - پلاک ۱۱۳

شهر کتاب پاسارگاد

تلفن: ۷۷۶۳۱۵۱۶


**«Յոյս» երկշաբաթաբեր լրագրական փառատուում է**

«Բեթիովեն» Գրախանութ

خیابان کریم خان زند - سنایی - پلاک ۲۳

تلفن ۸۸۳۱۳۸۶۸

# Art system



Arthur , Alen , Alex



## خدمات ماشینهای اداری

سرویس و تعمیر چاپگرهای لیزری جوهرافشان HP و سوزنی EPSON

تلفن: ۴-۸۸۳۱۵۳۴۳ و ۷-۸۸۳۲۱۴۳۶

فکس: ۸۸۸۳۳۰۰۰

آدرس: تهران، خیابان ایرانشهر جنوبی، پایین تراز خیابان سمیه،

شماره ۷، طبقه سوم، واحد ۵

## «ՖՈՐԲՍ». ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՐԿՐՐՐԴ ՎԱՏԱԳՈՅՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂՆ Է ԱՇԽԱՐՀՈՒՄ

Գայիանե Արրահամեան



«Ֆորբս» հեղինակաւոր ամսագիրը հրապարակել է աշխարհի տա-

ւր վատագոյն տնտեսութիւն ունեցող երկրների ցուցակը, որում

Հայաստանը զբաղեցրել է երկրորդ վատագոյն հորիզոնականը Մադագասկարից յետոյ:

117 երկրներից ընտրուել է վատագոյն տասնեակը՝ հաշի առնելով երեք տարւայ ընթացքում երկրի համախառն ներքին արդիւնքի աճը եւ գնաճը (այդ թւում՝ Արժոյթի միջազգային հիմնադրամի 2012 թ. կանխատեսումները), մէկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ինդեքսը, արտաքին պարտքը եւ ներմուծման արտահանման յարաբերակցութիւնը: 2010-ի համեմատութեամբ այս ցուցակում զգալի փոփոխութիւններ են տեղի ունեցել: Եթէ նախկինում ընդգրկւած էին հիմնականում աֆրիկեան պետութիւններ, ապա այս տարւայ ցու-

### ԱԻԵԼՈՐԴ ԱՂՄՈՒԿ «ՖՈՐԲՍ» ԱՄՍԱԳՐԻ ԱՂԻԻՍԱԿԻ ՇՈՒՐԶ

**Հարցազրոյց ԱԺ ՀՅԴ խմբակցութեան պատգամաւոր, տնտեսագիտութեան թեկնածու Արա Նռանեանի հետ**

Արման Գալոյեան

Նախ կը խնդրէի մեկնաբանել միջազգային հեղինակաւոր «Ֆորբս» ամսագրի հրապարակած տւեալները, թէ Հայաստանն իր վատագոյն տնտեսութեամբ երկրորդն է աշխարհում: Որքանով էր այդ գնահատականն իրատեսական:

Որքան էլ քննադատենք մեր տնտեսական վիճակը եւ մեր երկրի կառավարութեան տնտեսական քաղաքականութիւնը, պէտք է հաստատել, որ Հայաստանը ոչ երկրորդ, ոչ էլ տասներորդ վատագոյն տնտեսութիւնը ունեցող երկիրն է: Աշխարհում կան տասնեակ երկրներ, որոնք ոչ միայն ունեն վատ տնտեսութիւն, այլ նոյնիսկ կարելի է ասել՝ ընդհանրապէս տնտեսութիւն չունեն: Դետեւաբար, բոլոր նրանք, ովքեր համաձայնուում են «Ֆորբս»-ի հետ, կան լաւատեղեակ չեն, կան



ցակում տեղ են գտել նաև Ուկրաինան (4-րդ տեղ), Ղրղըզստանը (7), Իրանը (10): Տնտեսութիւնների անկման հիմնական պատճառները հետազոտութեան հեղինակները համարում են ոչ միայն տնտեսական ճգնաժամը, այլ նաև սխալ կառավարումն ու կոռուպցիան: «Գանան եւ Զիմբաբուեի բարելաւել են իրենց տնտեսութիւնը եւ դուրս եկել ցուցակից, մինչդեռ մի շարք երկրներ, այդ թւում՝ Հայաստանն ու ճամայկան, հիմնականում համաշխարհային ճգնաժամի պատճառով աւելի ցածր հորիզոնականներ են իջել: Միւսները, ինչպէս, օրինակ՝ Մադագասկարն ու Նիկարագուան, ցածր հորիզոնականներ են զբաղեցրել հիմնականում իրենց ղեկավարների անկարողութեան պատճառով: Զարմանալի չէ, որ 10 վատագոյն տնտեսութիւն ունեցող երկրներից ութը «Թրանսփարենսի ինթերնէյշնլ»-ի («ԹԻ») ներկայացրած ցուցակում («Կոռուպ-

ցիայի համաշխարհային համաթիւ») նոյնպէս ստորին հորիզոնականներ են զբաղեցրել, որոնցից Գլինեան, Ղրղըզստանը եւ Վենեսուէլան ամենացածր հորիզոնականներում էին: «ԹԻ»-ի հետազոտական խմբի ղեկավար Ռոբին Յոդէսի խօսքով՝ կոռուպցիան խոչընդոտում է տնտեսութեան զարգացումը, մարդկային զարգացումն արտացոլող բոլոր ցուցիչները դրանից տուժում են: «Որտեղ կառավարութիւնը չի աշխատում, տնտեսութիւնը չի զարգանում», - ասել է Յոդէսը: Ըստ «Ֆորբս»-ի՝ Հայաստանը հիմնականում տուժել է ֆինանսական ճգնաժամից. «2009-ին Հայաստանի տնտեսութիւնը 15%-ով անկում ապրեց, երբ արտասահմանեան ներդրումներով ընթացող շինարարական բումը ծախողէց համաշխարհային տնտեսական ճգնաժամի պատճառով: Գալիք մի քանի տարիների միջին աճի կանխատեսումներով՝ այս յետ-

խորհրդային երկիրը, որը կախած է Ռուսաստանի եւ Իրանի էներգակիրներից, ջանքեր է գործադրում աշխարհի միւս երկրներից յետ չմնալու համար: Հայաստանի մէկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 3000 դոլար է, որը 3 անգամ պակաս է հարեւան Թուրքիայի ՀՆԱ-ից, իսկ գնաճը 7% է»: Յայտնի տնտեսագէտ, «Ալլընտրանք» հետազոտական կենտրոնի ղեկավար Թաթուլ Մանասերեանը վստահում է «Ֆորբս»-ի այս գնահատականին. «Սովորաբար «Ֆորբս»-ի հետազոտութիւնները փաստարկւած են: Մեր հետազոտութիւնները եւս ցոյց են տալիս, որ Հայաստանի տնտեսութիւնը, մեղմ ասած, լաւ վիճակում չէ, այս առումով համակարծիք են, սակայն վստահ են, որ իրավիճակը շտկելու հնարաւորութիւնները սպառւած չեն», - «Արմենիանալին» ասում է Մանասերեանը: Աղբիւր՝ [www.armenianow.com](http://www.armenianow.com)

փորձում են շահարկել այս իրավիճակը: Սխալ է նաև միւս ծայրայեղութիւնը: Ընդունելի չեն այն պնդումները, որ երկրում ամէն ինչ լաւ է եւ այս յօդւածով մեզ պարզապէս փորձում են վարկաբեկել: Հայաստանի տնտեսութիւնը ունի լուրջ խնդիրներ եւ ճգնաժամի տարիներին արձանագրեց խորը անկում: Նոյնիսկ այսօր մենք դուրս չենք եկել ճգնաժամից եւ դեռեւս չենք ձեւաւորել տնտեսական աճի նոր աղբիւրներ: Եւ եթէ «Ֆորբս»-ի աղիւսակը կոչւէր «Ճգնաժամի արդիւնքում խորը անկում ապրած տնտեսութիւններ», գուցէ կարելի էր համաձայնել: Ի դէպ, «Ֆորբս»-ի մասին: Այն սիրում է կազմել տարբեր վարկանիշային աղիւսակներ՝ լուրջ եւ անլուրջ, մարդկանց եւ երկրների, ապրանքանիշների եւ նախասիրութիւնների: Եւ «Ֆորբս»-ի յօդ-

ւածի շուրջ այսքան աղմուկ չէր լինի, եթէ ժամանակին կառավարութիւնը ոգեւորութեամբ չփորձէր ժողովրդին նմանատիպ աղիւսակներով համոզել, որ Հայաստանը ունի հզօր տնտեսութիւն: Այս տարիներին իրական տնտեսական քաղաքականութիւնը փոխարինւեց իմիտացիոն գործընթացներով: Թէեւ քաղաքացիները տեսնում են երկրում բազմաթիւ խնդիրներ, թէեւ հազարաւոր մարդիկ կեանքի ծանր պայմաններից ելնելով բռնում են արտագաղթի ճանապարհը, մեզ համոզում են, որ Հայաստանի տնտեսութիւնը եւ կառավարութեան տնտեսական քաղաքականութիւնը արժանանում է ամենաբարձր գնահատականների: Եւ ահա մի օտարալեզու հանդէս ասեց հակառակը: Ինչ վերաբերում է մեր իրական տեղին աշխարհում: Ես չեմ ու-

զում, որ Հայաստանը համեմատեն յետամնաց երկրների հետ: Այսօր Հայաստանը յետամնաց երկրի տնտեսութեան մոդելով է առաջնորդւում՝ արտահանում ենք հումք, աշխատուժ, շուտով նաև դրամ (կենսաթոշակային բարեփոխումների արդիւնքում), իսկ ներմուծում ենք պատրաստի արտադրանք: Եւ այս յօդւածի մեզ համար ամենավատ հետեւանքն այն է, որ արդէն նաև դրսում մեզ դիտարկում են յետամնաց եւ չկայացած պետութիւնների շարքում: Իսկ այստեղ իսկապէս Հայաստանը իր մեղքն ունի: Այո, եթէ համեմատենք Հայաստանը աշխարհի բոլոր երկրների հետ, ապա մենք կը զբաղեցնենք զարգացւածութեան աստիճանով միջին տեղեր, սակայն բաւական է ցանկից հանել այն երկրներին, որոնց հետ համեմատելը անհեռանկարային է



Եւ փակուղային՝ պետականութեան կայացման ու հզօրացման տեսանկիւնից, իսկ ցանկուն թողնենք կայացած պետութիւններին, ապա կը տեսնենք, որ կայացած պետութիւնների շարքում մենք կը զբաղեցնենք վերջին տեղերը:

